

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հե. ՏԱՌԻ, 2006, թիվ 11-12 (293-294) VOL. XXV №11-12  السنة الخامسة والعشرون العيد الحادية عشر – الثاني عشر

## ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ



ՅՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ  
ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ



**«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ ԿԱՐԴԱԼ**



Ph.Raffi Berberian

**Հ.Ա.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ  
Ա ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ - ՊԷՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ**

**«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՖՈՆՏԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

<b>●ՄՈՆԹՐԷԱԼԷՆ՝</b>		<b>Գեորգ Պիլեմճեան</b>	<b>50 Գ. Տ.</b>
Արթուր եւ Ալին Մարգարեան	2000 Գ. Տ.	Բաֆֆի Աբանեան	50 Գ. Տ.
Հայկ եւ Անահիտ Մարգարեան	300 Գ. Տ.	Մովսէս Թովուրեան	50 Գ. Տ.
Տիգրան եւ Տիանա Հաճէթեան	300 Գ. Տ.	Պերճ Աճեմեան	50 Գ. Տ.
Լեւոն Մելքոնեան	300 Գ. Տ.	Արքի Ղազարեան	40 Գ. Տ.
ՀՕՄԻ Գանատայի Երջանային վարչութիւն	200 Գ. Տ.	Յակոբ Նարեկեան	30 Գ. Տ.
ՀՕՄԻ Մոնթրէալի «Սօւէ» մասնաճիւղի վարչութիւն	200 Գ. Տ.	Թալին Մկրտիչեան	20 Գ. Տ.
ՀՕՄԻ Լաւալի «Շուշի» մասնաճիւղի վարչութիւն	150 Գ. Տ.	Վահէ Ահարոնեան	20 Գ. Տ.
Աստղիկ Ծամլեան	100 Գ. Տ.	<b>●ԹՈՐՈՆԹՈՅԷՆ՝</b>	
Տիրան Ծահինեան	100 Գ. Տ.	Երուանդ Ծահինեան	100 Գ. Տ.
Գրիգոր Ապրաքեան	100 Գ. Տ.	Արմէն Կէտիկեան	100 Գ. Տ.
Պետրոս Հայրապետեան	100 Գ. Տ.	Հրաչ եւ Հելէն Նաճարեաններ	100 Գ. Տ.
Ճորճ Պալեոզեան	100 Գ. Տ.	Վահէ եւ Հերմիճէ Նաճարեան	50 Գ. Տ.
Սարգիս Օվայեան	75 Գ. Տ.	Անդրանիկ Խաչատուրեան	50 Գ. Տ.
Պերճ Աթոլիկեան	60 Գ. Տ.	Ժան Սարխանեան	50 Գ. Տ.
Արմէն Ա. Քոնյ. Իշխանեան	50 Գ. Տ.	Գեորգ Յակոբեան	50 Գ. Տ.
Սեդրակ Պուրսալեան	50 Գ. Տ.	Զարեհ Տէրվիշեան	25 Գ. Տ.
Յովհաննէս Յովհաննէսեան	50 Գ. Տ.	Վիգէն Խանամիրեան	25 Գ. Տ.
Գրիգոր Գուշեան	50 Գ. Տ.	Անդրանիկ Աշըգեան	25 Գ. Տ.
		Հայկ Յակոբեան	25 Գ. Տ.



# ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՂ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مازنيك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



3

## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հարցազրույց 3
- Դաստիարակչական 7
- Իրագործում 8
- Ի Ֆուշ 11
- Մասնագիտական Մասնագիտական 21



32



24

## ԲԱԺԻՆՆԵՐ

- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻՇ. ՏԱՐԻ, 2006, ԹԻԻ 11-12 (293-294)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Անագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ  
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ  
 Աբո Մոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Պետրոս Շեննեան, Լևոն  
 Թաշճեան, Եսայի Հասարեան,  
 Սալբի Լատոյեան  
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Չարեհ Չօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողմի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշդուած է 35000 լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մէլուսի  
 և Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեանը  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 և Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):







# ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌ Գ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՆՐԱՊ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄԻ ԿԵՑՈՒՄԸՔԸ ՎԱՐԿԱԲԵԿԻՉ ԵՒ ԸՆԴՎՁԵՑՈՒՑԻՉ Է

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՄ

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ամրապնդման նպատակով կազմակերպուած խորհրդաժողովները, համահայկական մարզախաղերը, փառաբանումները եւ համաժողովները (կրթական, գրողներու...) կ'արտայայտեն հայութեան դէմ ցցուած դժուարութիւնները միասնական ջանքերով դիմագրաւելու բարի փրամադրութիւնը: Առ այդ, անոնք կ'ենթադրեն համախմբել հայ ժողովուրդի հոգեւոր, նիւթական եւ մտաւոր կարողութիւնները ի սպաս ազգային նպատակներու իրագործման:

Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովները այս իմաստով ողջունելի նախաձեռնութիւններ են, սակայն անոնք իմաստ է կը պարտուին, երբ ինչ-ինչ հաշիւներով կ'անկրտեսն հաւաքական մեր կեանքին ներդրում ունեցող որեւէ հայրուած, միութիւն կամ կազմակերպութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի օրինակը պերճախօս է: Հ.Մ.Ը.Մ., իբրեւ համահայկական միութիւն, անցնող Սեպտեմբերին պարտիւր ունեցաւ առաջին անգամ ըլլալով պաշտօնապէս հրաւիրուելու նման խորհրդաժողովի եւ, սակայն, իր առաջին մասնակցութեամբ ան արժանացաւ հայրենի վարիչներու վարկաբեկիչ վերաբերումին:

Հարցին ծայրերուն եւ մանրամասնութիւններուն ծանօթանալու համար, արդեւ փրուած հարցազրոյցը «Մարզիկ» ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին հետ:

Թեեւ Հայաստան-Սփիւռք Գ. խորհրդաժողովին անցած են ամիսներ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը տակաւին քանգամանօրէն չէ արտայայտուած խորհրդաժողովին իրենց ցուցաբերուած վերաբերումին մասին. ինչո՞ւ այս ուշացումը:

- Հ.Մ.Ը.Մ. հայ ժողովուրդի ցաւէն ու զրկանքէն ստեղծը-

ւած կազմակերպութիւն է: Ան կը մարմնաւորէ իր ժողովուրդին խեղճներն ու երազները եւ, բնականաբար, ամէն ճիգ ի գործ կը դնէ անոնց իրականացման համար: Հ.Մ.Ը.Մ. իր առաքելութեամբ եւ անուանումով ընդհանուր միութիւն է: Բոլորը կը համախմբէ եւ բոլորին ծառայելու կոչուած է: Աշխարհի տարածքին սփռուած իր 98 մասնաճիւղերով եւ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՒԿՈՒԹՅՈՒՆ  
ստեղծված 2006 թվականին  
Դատախազական կորպորացիայի անվան

ՀՊԵ ՄԱՐԿԱՆՏՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

7 ապրիլ, 2006 թ.

Միջին նայեցման ծրագրեր

Այս նամակով անդրազգային են Ձեռ, որ Հայաստան-Միջուկային փոխադարձագործությունների և գործադրության խնդիրները ընթացիկում մշակվելով 2006թ. սեպտեմբերի 18-19-ը երևանում նրանցիցում է Հայաստան-Միջուկային կորպորացիայի:

Այս առթիվ մեր ժողովուրդը համաձայնական առաջարկություններ է Հայաստանի Անվտանգության 15-ամյակին և սեպտեմբերին կայանալից կորպորացիայի ծրագրերը մշակվելով և միասնաբար ընթացիկում վերանայել, ամփոփել գնահատել մեր անցյալ ամառային և նախաձեռնված առաջիկա ամառային, աշխարհա-շրջանային մեր կորպորացիաներում մեր ժողովուրդը առաջիկա ամառային խնդիրները միասնաբար լուծելու տեղիները, նմանազանություններն ու կենսականները:

Այնպես կայացած Հայաստան-Միջուկային կորպորացիայի խորհրդակցությունների և Հայաստան-Միջուկային փոխադարձագործությունների և գործադրության ամրագրման և զարգացման առաջարկները կատարված աշխատանքների շնորհիվ ստեղծվել են ամառային և, համապատասխան միջոցառումներ, որոնք մեզ նմանազանություն են ապահովում առաջիկա ամառային համապատասխան, գործունակ, ուղղակիորեն և ընդամենը խնդիրներ և միասնաբար լուծելու լինելը ըստ իրականացման:

Նախատեսված են Հայաստան-Միջուկային կորպորացիայի խորհրդակցություն օրակարգում ներառելու միջոցով և համապատասխան առաջարկները:

Միջուկային 18-ին՝ առաջին փուլում միասնաբար, կրճատվելով Հայաստան-Միջուկային փոխադարձագործությունների և գործադրության լինելով և զարգացման համապատասխան ծրագրեր, որը ակնհայտ է և ընդամենը պահանջում է մեր մտածողները՝ միասնաբար և միասնաբար, աշխարհա-շրջանային մեր կորպորացիաներում և զարգացումները:

Տեղեկություններ Հայաստանի Հանրապետության 2-րդ շրջան, Երևան 375810  
Government House 2, Republic Square, Yerevan, 375810  
Tel./Fax: (374 10) 583 978 Tel.: (374 10) 583 928, 583 948  
E-mail: [info@arminfo.am](mailto:info@arminfo.am)  
<http://www.arminfo.am>  
<http://www.arminfo.am/eng/engmain.htm>

Հինգշաբթի օրը՝ սեպտեմբերի 21-ին, մայրաքաղաքում կանգնվելու Անվտանգության 15-ամյակին նվիրված առաջին միջազգային և հասարակ են, որ շատ կրթերը Ձեր մասնակցությունը:

Ողջ շաբաթվա ընթացքում Գյուլագանեստանյան նախարարության և Անտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից կազմակերպվելու են ֆորում-ցուցահանդեսներ՝ նվիրված Հայաստանի անտեսական գործունեությանը, գյուղատնտեսության զարգացմանը, կենսականներին և գործընկերներին, որոնք տեղի կտրվեն մայրաքաղաքի կենտրոնում, և որոնք ցամաքային է համաձայնվել մասնակցությունը մասնակցությունը:

Կենտրոն ենթա մասնակցելու ընթացքում որպես Ձեռ ուղղված կապի՝ մասնակցելու համաձայնվելով և որս շատ նախատեսված միջազգայիններին, և մեզ ինքնուրույն Ձեր առաջարկները և տեսանկյունները օրակարգ, կենսականները կամ կենտրոնային փոստով: Վերջնական, մասնաձև օրակարգը Ձեռ կվերահսկվի մինչև հոկտեմբերի 1-ը:

Ընտրյալ են՝ 2006թ. Հայաստանի անվտանգության 15-ամյակին նվիրված կայանալից Հայաստան-Միջուկային կորպորացիայի կողմից կորպորացիայում կենսականները մեր ժողովուրդը կայանում, մեր համապատասխան և միասնակցությունները կենտրոնի մեր որակ, շուրջ, կենտրոնի կարևոր որոշումները համաձայնվել խնդիրները միասնաբար, համաձայն շաբաթվա լուծելու առաջարկ՝ ի փաստ մեր ժողովուրդը ապահովում և ամփոփել զարգացման ու բարեկեցության:

Հարգանքով՝

Խորհրդակցության նախարարության  
համեմատական Նախարար

ՎԱՐՈՒՆ ՕՍՄԱՆՅԱՆ

Կը փորձեն չբեղանք գտնել իրենց արարքին:  
Մենք կ'ակնկալվենք, որ անցնող ամիսներուն հայրենի վարիչներ համոզիչ բացատրություններ տալին խորհրդաժողովին ՀՄԼՄ-ի հանդէպ իրենց ցուցաբերած կեցուածքին համար, սակայն երբ անտեսումը շարունակուեցաւ լուր-թեամբ՝ ստիպուեցանք եղածը հանրային կարծիքին սեփականութիւնը դարձնել: Ի վերջոյ, ՀՄԼՄ-ը ժողովուրդէն է,

Խորհրդակցութիւնը իրարմար միասնաբար նախատեսում են Հայաստանի Հանրապետության և ԷՂԸ դիվանագետներ, ԱՄՆայի Հայոց և Մեծ Տանն Կիլիկի կարգիչներին և մասնաբար նախատեսված կողմը առաջնորդների, ինչպես նաև համապատասխան և համապատասխան առաջարկները կատարելու, առաջին կրկնակի հայ համայնքների ներկայացուցիչներին և առանձին անասանների կողմից:

Սակայն 19-ին՝ խորհրդակցութիւնը կը կատարուի Երևանում և օրակարգը կը կատարուի Հայաստանի գյուղական համայնքների զարգացման ժողովի ընթացքում: Ցամաքում են այս առթիվ վերադարձը Ձեռ ներկայացնել որոշ ակնկալություններ:

Հայաստանի նախարար ընդամենը զարգացման և մի շարք առաջնորդական խնդիրների լուծման անտեսելուց այսօր առանձին կորպորացիայում ու ընդամենը լուծման և ստանում Հայաստանի գյուղական համայնքների համապի զարգացման ապահովումը: Այդ նկատառումներից կենտրոն խնդիր է որդում Հայաստանի կառավարության և գործադրող շրջանակների, Միջուկային և միջազգային առաջնորդ կազմակերպությունների համաձայն շաբաթվա ընթացքում լինելով Հայաստանի գյուղական համայնքների և նրա առաջնորդների համապի վերաբերմանը, միասնակ անգլային անտեսում զարգացմանը՝ գտնելու անհրաժեշտ արդիւնք և աշխատել՝ մասնակցել համապատասխան պայմաններ: Այս ժողովում որպէս առաջնային ընտրվել են անտեսումները գյուղական համայնքները:

Հարցի վերաբերյալ մասնաձևներին տուրքի համաձայնորեն Ձեռ անդիվանդը նախատեսվել կը ուղղվում են մեր համապատասխան փաստաթուղթը /նախկինում:

Օրակարգի այս առթիվ ընթացքում կենտրոնի այն համայնքների, կազմակերպությունների, խորհրդի ներկայացուցիչները և անասանները որոնք առջին համաձայնություն են ակնկալում մասնակցել զամառային ժողովի իրականացմանը, բնակավայրում ընթացիկում կատարող կարող են մասնակցել մասնակցութիւնը այն պայմաններին, որոնք նախարարության տնք այս ժողովի նկատմամբ:

Միասն կրեւաքի օրակարգի մինչև յոթշաբթի՝ սեպտեմբերի 20-ը, նախատեսվում է անդրազգային շաբաթվա լուծելու խնդիրներին ՄԿԿ Գործի Ազգ-Պետության համար խորհրդի կողմից, որտեղ ընթացքում կը կատարվեն համապատասխանացման համաձայնություն հայկական խնդիրները ակնկալելու շաբթ, ինչպէս որ՝ հայրազանցություն, լուծել, մշակույթ, կրթություն, կրկնազգայինություն, հայրենասիրություն ընթացքում և վերջինս համար մեր համապատասխանները, կենսականներ և այլ հարցեր:

Նախարար Օսկանեանի 7 Ապրիլ 2006 թուակիր 3 Էջնոց նամակի ն պատճէնը:

աւելի քան 25 հազար ան-դամներով ան համահայկական միու-թիւն է: Այս-քանը ամէն մարդ գիտէ եւ ըստ այնմ կը վերաբերի անոր հետ: Հարցը սա-կայն այն է, որ կան մար-դիկ, որոնք չեն ուզեր ճշմարտու-թիւնն երբ տեսնել: Կոյր կը ձեւանան ալ

հետ: Հանդիպումին յարգելի նախարարին ուշադրութեան յանձնուեցաւ, որ ՀՄԼՄ համահայկական կառուցող միու-թիւն է, աշխարհի 98 քաղաքներուն մէջ մասնակցող ունի, Սփիւռքի երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնն է եւ սպասելի է, որ յառաջիկային առանձին պատուիրակու-թեամբ մասնակցի նման խորհրդաժողովներու: Նախարար Օսկանեան օրին հասկացողութեամբ ընդունեց ՀՄԼՄ-ի առաջակը եւ խոստացաւ պարտն ու պատշաճ տնօրինել:

Այս իմաստով, հետեւաբար, նախընթաց չկայ: Սակայն կայ ուշադրութեան արժանի այլ դէպք մը, որ տեսակ մը նախը-թաց է ՀՄԼՄ-ը անտեսելու: 2002ին, համահայկական Բ-խաղերուն, երբ որոշում կար որ մասնակցի խումբերէն ոչ ոք իր միութեան տարազով պիտի տողանցէր, որոշումը բա-ռացիօրէն գործադրուեցաւ ՀՄԼՄ-ի պարագային, սակայն անդին այլ միութիւն մը, որուն հանդէպ ամենայն յարգանք ունինք, արտօնութիւն ունեցաւ 100 հոգինոց իր նուազա-խումբով եւ տարազներով խաղերուն բացումը կատարելու: Մէկուն արգելուածը միւսին արտօնուեցաւ: Զհասկցանք թէ ինչո՞ւ: Բայց հիմա որ չորս տարուան հեռուութենէ հտք կը փորձենք եղածը բացատրել, այն եզրակացութեան կը յան-գինք, որ ըստ երեւոյթիւն Երեւանի վարիչներուն համար կան նախապատիւ եւ երկրորդական կազմակերպութիւններ: ՀՄԼՄ-ը ըստ երեւոյթիւն անոնց աչքին երկրորդական կը թուի ըլլալ:

Իսկ ի՞նչ պատահեցաւ խորհրդաժողովին:  
- Խորհրդաժողովին 5 ամիս առաջ, Կեղրոնական Վարչու-թիւնը ստացաւ 7 Ապրիլ 2006 թուակիր նամակ մը՝ խորհրդա-

ժողովը նախապատրաստող յանձնախումբի նախագահ Վարդան Օսկանեանին: Նամակը կը տեղեկացնէր խորհրդաժողովին թուականը, վայրը, օրակարգի կէտերը եւ կը փոխանցէր հրաւէր՝ մասնակցելու խորհրդաժողովին եւ անոր կողքին նախատեսուող ձեռնարկներուն:


Յունիսին, Կեղրոնական Վարչութիւնը ստացաւ երկրորդ նամակ մը, 16 Յունիս 2006 թուակիր, որ վերահաստատելով խորհրդաժողովի մասնակցութեան հրաւէրը, բառացիօրէն կը խնդրէր՝ «Խորհրդաժողովի բացման առաջին լիագումար նիստում Ձեր կազմակերպութեան անունից հանդէս գալ 7-10 րոպեանոց ելոյթով՝ նուիրուած մեր համագալսին խնդիրներին եւ խորհրդաժողովի օրակարգում ներառուրած հարցերին»: Այս նամակը եւս կը կրէր նախարար Վարդան Օսկանեանի ստորագրութիւնը:

Հետեւաբար, երկու նամակներուն լոյսին տակ, Կեղրոնական Վարչութիւնը որոշեց պատշաճ կերպով մասնակցել խորհրդաժողովին: Կազմուեցաւ քառանդամ պատուիրակութիւն, պատրաստուեցաւ խօսք:

Սեպտեմբերին, խորհրդաժողովի բացումէն երկու օր առաջ, պատահամբ համացանցի մէջ տեսանք խորհրդաժողովի բացման նիստին ելոյթ ունեցողներուն ցանկը, որմէ անհասկնալիօրէն կը բացակայէր Հ.Մ.Ը.Մ-ի անունը: Անմիջապէս կապուեցանք Երեւան՝ արտաքին գործոց նախարարութիւն, սակայն անպատասխան մնացինք:

Արդեօք խորհրդաժողովի կազմակերպիչները վստահ չէին ճերմակ անուշիկ համար խօսքի բաժին չէին նախատեսած:

- Ո՛չ, եղածը կանխամրտածուած էր: Կեղրոնական Վարչութիւնը, օրին, նամակով մը (30 Յունիս 2006 թուակիր) նախարար Օսկանեանը տեղեկ պահեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը յատուկ պատուիրակութեամբ մը պիտի մասնակցի խորհրդաժողովին: Նամակին մէջ բառացիօրէն ըսինք.



**Նախարար Օսկանեանի 16 Յունիս 2006 թուակիր 2 էջնոց նամակին պատճէր:**

«Ձեր ուղարկած քրթածրարները մեր յատուկ ուսումնասիրութեան առարկան են. պիտի շանանք մեր կարելուր եւ օգտակար ներդրումը բերել խորհրդաժողովին»: Նմանօրինակ նամակ մըն ալ (31 Օգոստոս 2006 թուակիր) առաքեցինք Լիբանանի մէջ Հայաստանի լիագոր դեսպան պրն. Վահան Տէր Ղեւոնդեանին:

Դեսպան Տէր Ղեւոնդեան իր կարգին Կեղրոնական Վարչութեան յղեց նամակ մը, որուն մէջ Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութեան պետը հրաւիրեց նախարար Օսկանեանի հետ խորհրդաժողովի պատուիրակութիւններու պետերու հանդիպումին: Այս բոլորին փաստաթուղթերը կան:

**Իսկ ինչ ո՞ւ Երեւանի մէջ անհրաժեշտ լուսաբանութիւններ չպահանջեցիք այս գծով:**

- Այդ մէկն ալ եղաւ: Երեւան հասնելով, մեր պատուիրակութիւնը տեսակցութիւն մը խնդրեց նախարար Օսկանեանին: Նախարարը բազմազբաղ ըլլալով, ժամադրուած իր խորհրդականին հետ: Տեսակցութիւնը կատարուեցաւ եւ խորհրդականը մեզի ըսաւ. «Կը հասկընամ ձեր մտահոգութիւնը եւ գայն կը փոխանցեմ նախարարին: Նախարարը ձեզ տեղեկ կը պահէ»:







Հայ Կարճակրթական Վեդախորհրդի Կենտրոնական Կոմիտեի  
**HOMENETMEN** Sports and Scouting Organization World Committee

Պեղրթ, 13 Հոկտեմբեր 2006

Նամակ թիվ 399


**Մեծայրգ Տիար Կարոյան Օսկանան**  
Հայաստանի Հանրապետության Արդարադատության Գործերու Նախարար  
Եւ Հայաստան-Սփիւր Վարձակրթական  
Կրթարդ Խորհրդարարական Կազմակերպութիւն

Յարգելի Պրն. Նախարար,

Կեդրոնական Կարգադրութիւն եւ Միտքեան քիւ կազմիդը ի տղ աշխարհ իրենց ընդկրթի կ'արձանագրեն Չար այս արարքին համար, իսկ մեզի արտաւ թարք պատճառաբանարքնեմիդը կը գտնեմք անքերութիւն:

Այս, Կեդրոնական Կարգադրութիւն եւ Միտքեան քիւ կազմիդը ի տղ աշխարհ իրենց ընդկրթի կ'արձանագրեն Չար այս արարքին համար, իսկ մեզի արտաւ թարք պատճառաբանարքնեմիդը կը գտնեմք անքերութիւն:

Այս արքիւ, կը յիշցնեմք ման, որ անքեանիմ՝ Համահայկական խորքեւ ըրքարքնեմ ալ մեզ անմասաւ էր այլ դասարարութիւն:



Հայ Կարճակրթական Վեդախորհրդի Կենտրոնական Կոմիտեի  
**HOMENETMEN** Sports and Scouting Organization World Committee

Մեք շեք կրճար քարգառառիւ այլ միտքեանքեւ հետ, ունիմք 90 տարեան պատմութիւն, մանա համա-սփիւրքեան լայնամասալ կառույց լալույց հանքանք:

Տակահիմ ծառիկ անքեանիմ՝ անքող 70 տարի շարունակ, Միտքեանը կառաւ է միտքե, որ արտառանմանք մեզ հետքայն որքը միշտ քարճր պատաւ է եւ իրաւ շարքերով տղարքեանք՝ հայկական անքալ պետքութիւն ին քանակ ունեմքարտ տեղալալանք:

Մեծարքող Պրն. Նախարար,

Մեք երքք շեք կրճար պատկերքանք, որ մեր Հայքնեմիք քարգառառայն պաշտօնեմիւնք մեկը տառնեման անքնառքութիւն մե, մեզի փոխանք, քի հրաւեր մանակ մեզի ստաւ տառաւ է, եքր ան կը կր Չար իսկ տղարքութիւնք Կեդրոնական կը համարքնեք եւ արքարք Միտքեան համար կը սեղանք վարքարքիւ:

Ուտի կը պատմքքնեք, որ մեզի մեկտիւ անքնաք իրաւ Սփիւրքի մեծապայն միտքիւնքնեք մեք, որ հիմնաւաւ է 1918թ, կը գործ աշխարհի տարաքնեք՝ 99 մանքանքիւրքով, անքի քան 15.000 սկաւառեմքով, 20.000 մարքիւնքով եւ քազմառաքար համակրքեմքով:

Լիալայս եքր, որ այլ անքիւնքով կը դարձնեմք պատաւաքք:

Յարգաքող,  
Ի Կիւնքս՝  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչարքեան  
Ատեմաքարքի  
Վարչարքի Վարչարքեան

Վարչարքի Վարչարքեան  
Վարչարքի Վարչարքեան

**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչարքեան կողմէ նախարար Վարդան Օսկանեանի շրուաճ բողոքի եւ ընդվզումի անաակիւն պատճնեք:**

Խորհրդարարական քարգառառութիւն օր մը առաջ կազմակերպըւաճ էր նախարար Օսկանեանի հետ պատուիրակութիւններու պետերու հանդիպում-ճաշկերոյթը: Հանդիպումէն առաջ, նախարար Օսկանեան մեզմէ խնդրեք հարքը հոն չարճարճել: Ընդառաջեցիմք առաջարկին եւ հանդիպումէն ետք առանձին տեսակցութիւն մը ունեցանք հետը: Հոն, նախարարը ընդունեք եղաճը եւ պատճառաբանեք, որ Հ.Մ.Ը.Մ.ին խօսք պիտի չարուի, որովհետեւ հայ մարգական երկու այլ միտքեաններ քարգակայ են խորհրդարարական, իսկ անոնք քարգակայութեան միտքն Հ.Մ.Ը.Մ.ին խօսք տրուելը ճիշդ չէ: Մենք ըսիմք, թէ արգելք չունիմք յիշեալ միտքեաններու ներկայութեան եւ երոյթին, վերջին հաշուով որոշողը դուք էք, քարգ ճիշդ չէ հարքերը այդ ակնոցով դիտել:

Իսկ երբ հարք տուիմք, թէ ինչո՞ւ Համագրքայինը եւս գրկուաճ է խօսքէ, քանի խօսք տրուաճ է մշակութային այլ միտքեան մը ներկայարքեցիլին: Նախարար Օսկանեան ըսաւ, թէ Համագրքայինի պարագան վրիպում մըն է եւ կը սրբագրենք: Սակայն Հ.Մ.Ը.Մ.ին գրկուաճ նամակը սխալմամբ ստորագրաճ եմ: Հո՞ն է որ մեր ընդվզումն ու բողոքը արճանագրեցիմք նման «սխալ»ի մը համար եւ ըսիմք, թէ պատուիրակութեան մնացեալ անդամներուն հետ խորհրդակցելէ ետք՝ կը դիմենք անհրաճեշտ քարգելու:

**Եւ ի՞նչ քարգելու դիմեցիք:**  
- Ներկայ եղանք խորհրդարարական պաշտօնական քարգումին միտքն եւ անկէ ետք քարգուեցանք բողոք նիստերէն:

Կրկնապայմանալ կը հարքնեմք, որ մեր Հայքնեմիք քարգառառայն պաշտօնեմիւնք մեկը տառնեման անքնառքութիւն մե, մեզի փոխանք, քի հրաւեր մանակ մեզի ստաւ տառաւ է, եքր ան կը կր Չար իսկ տղարքութիւնք Կեդրոնական կը համարքնեք եւ արքարք Միտքեան համար կը սեղանք վարքարքիւ:

**Քանի հասցեւ յտակ է, ինչո՞ւ յաւելեալ քարգելու չդիմեցիք՝ մեր բողոքը ներկայարքեցիլու համար:**

- Դիմեցիմք զանագան միջոցներու: Խորհրդարարական աւարտին, Կեդրոնական Վարչութիւնը ընդվզումի եւ բողոքի նամակ մը գրեք Հայաստանի արտաքին գործոց նախարար, Հայաստան-Սփիւրք Գ. խորհրդարարական նախագահ Վարդան Օսկանեանին, իսկ երկրորդ նամակ մըն ալ գրուեցաւ նախագահ Ռոպէրթ Քոչարեանին, զայն տեղեակ պահելով եղաճին եւ մեր կեցուաճքին մասին:

**Որեւէ պատասխան ստաքա՞ք:**

- Յարը ո՞չ մէկ պատասխան, որուն համար ալ մեր լուրթիւնը կը խզենք եւ ահաւասիկ իրականութիւնները կը դենք մեր ժողովուրդի տրամադրութեան տակ, որպէսզի ի՞նչ դատէ, թէ հայրենի իր պատասխանատուները ի՞նչպէս կը վարճատրեն Սփիւրքի հօրագրոյն երիտասարդական կազմակերպութիւնը, որուն «կամաւոր բանակը» 70 տարի առաջնորդաճ է մեր ժողովուրդին տղանքքները, Եռագոյնը եւ Մայիս 28ը սրբութեան պէս պահաճ է եւ Հայաստանը, իբրեւ արճեք, ամէն բանէ վեր դասաճ է ու կը դասէ:



# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

- Ը -

«Ց. Յաղթանակներն ու պարտությունները կ'ընդունի մարզական նույն ոգիով, վեհանձնութեամբ եւ համեստութեամբ»:

Պետրոս Շեմսեան\*  
ՊԷՅՐՈՒԹ



**Թ**երեւս գտնուին մարզիկ, որոնք ըսեն, թէ «յաղթանակները եւ պարտությունները մարզական նույն ոգիով ընդունիլ» ըսելը դիւրին է, սակայն խորքին մէջ դժուար է: Նման դժուար պարագաներ առիթ են գատորոշելու Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը՝ այլ մարզիկներէ:

Անգլիացի մեծ բանաստեղծ Քրիսթինկ իր «Եթէ» բանաստեղծութեամբ կ'ուրուագծէր տիպար մարզ ըլլալու յատկանիշները: Իր շարք մը «Եթէ»ներով ան կը պայմանաւորէր իր գաւկին «մարզ» ըլլալու, այլ խօսքով՝ գլխաւոր Մարզ ըլլալու ստորոգելիները:

Վերոյիշեալ «Եթէ»ներու քննութեանն անցնելէ ետք միայն, հայրը կ'ընդունէր տղուն Մարզ ըլլալը:

Նոյն «Եթէ»ները կարելի է ուղղել նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին, որ եթէ յաջողի ընդունիլ անոնց խիստ պայմանները, ինչպիսին է «յաղթանակի եւ պարտութեան» պայմանը («Յաղթանակէն ետք հանդիպիլ պարտութեան եւ նոյն ձեւով ընդունիլ զոյգն այդ խաբող»), այն ատեն է որ մարզիկ պիտի ըսեն՝ «հաւաստիկ իսկական մարզիկը, որ Հ.Մ.Ը.Մ.ական է»:

Իր պարտութիւնը յաղթանակի ոգիով ընդունող Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը առաջին ակնարկով իսկ շահած է իր մրցակից խումբին եւ համակիրներուն համակրանքը, ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ական իր համակիրներուն զօրակցութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը իր տիպար կեցուածքով կու գայ ըսելու, թէ էականը, հիմնականը, մնայունը, մարզական օրինակելի ոգիին դրսեւորումն է:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը յաղթանակի հասնելու համար չի միտիր դիմելու որեւէ միջոցի, այսինքն՝ խարդախութեան կամ ոչ-մարզավայել ձեւերու: Ան միջոցներու մէջ խորութիւն կը դնէ: Ան կը փնտռէ մաքուր միջոցներ: Ան միշտ հաւատարիմ եւ յանձնառու է միջազգայնօրէն ընդունուած «Ֆեր փլէյ»ի պատգամին, մանաւանդ որ «Ֆեր փլէյ»ի պատգամէն տարիներ առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութիւնն

ու բարոյական սկզբունքները փոխանցուած են իրեն, Հ.Մ.Ը.Մ.էն ներս իր առաջին իսկ սկզբնաքայլերուն:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը միշտ ի մտի պէտք է ունենայ, որ ինք իրմէ կրտսերներուն աչքին կը մնայ հերոս եւ օրինակ: Մարզական իր իւրաքանչիւր արարքին մէջ ան ենթակայ է հսկողութեան, իր մեծերէն եւ կրտսերներէն:

Որքան շատ են Հ.Մ.Ը.Մ.ական այն մարզիկները, որոնք իրենց պատանեկան տարիքին ազդուած եւ ջանացած են նմանիլ Հ.Մ.Ը.Մ.ական երէց տիպար մարզիկի մը: Երկար տարիներ վերջ իսկ այդ մարզիկին մտապատկերը մնացած է անոնց ենթագիտակցութեան մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ական տիպար մարզիկը առաջին իսկ օրէն յաջողած է յաղթանակներն ու պարտութիւնները նոյն ոգիով ընդունելու քննութեան մէջ:

Հարցուցէ՛ք ոեւէ Հ.Մ.Ը.Մ.ականի, որ հետեւած է միութեան մարզական ելոյթներուն, ու ան անպայման ձեզի պիտի տայ անունը Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի մը, որուն անունը դրոշմուած ըլլայ մտքին մէջ: Որքան շատ են այն Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք երանի կու տան Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի փառքը կերտած մարզիկներուն: Այդ մարզիկները չէին կրնար դիմանալ ժամանակի մաշումին, եթէ հասած չըլլային մարզիկի այն տիպարին, որ տարիներ շարունակ պարտութիւններն ու յաղթանակները դիմագրուած չըլլայ նոյն ոգիով:

\* Անտիպ: Խմբագրութեան յանձնուած՝ նախքան իր առողջական վիճակին վատթարացումը եւ անողոք մահը:

# ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԵՐԵՒՈՅԹ Հ.Մ.Ը.Մ.Ի

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

**ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ  
ԱՂՋԿԱՆՅ ԽՈՒՄԵՐԸ ԵՐՐՈՐԴ  
ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ  
ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ  
ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԻՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի պարամոնիան մէջ հպարտալի բազմաթիւ էջեր արչանագրած Լիբանանի փինկ-փոնկի աղջկանց խումբը, Նոյեմբերին, աննախընթաց նուաճում մը եւս կապարեց, երբ վեց պարուան մէջ երրորդ անգամ ըլլալով փիրացաւ արաբական աշխարհի ախոյեանութեան փիպոզուսին, պարպուրեան մապրնելով Եգիպտոսի «Ահլի»ն: Այս յաղթանակով Հ.Մ.Ը.Մ.Ի աղջիկները իրենց վրէժը լուծեցին մրցակիցէ մը, որ 2005ին փիպոզուսին փիրացած էր զիրենք պարպուրեան մապրնելէ ետք:



Նախապէս, Հ.Մ.Ը.Մ. 2002ին եւ 2003ին արժանացած էր արաբական աշխարհի ախոյեանութեան բաժակին, պարպուրեան մապրնելէ ետք նոյնիմբն «Ահլի»ն:

Հ.Մ.Ը.Մ.Ի աղջկանց յաղթանակը եկաւ 5 անպարտելի մրցումներէ ետք: Մարզիչ Բաֆֆի Մունջօղլեանի հսկողութեամբ, Մարիանա Սահակեան-Սոմոնճեան, Լարա Քէչէպաշեան եւ Լի Զի Քի (չին) եռեակը յաջորդական յաղթանակներ արձանագրեց Լիբանանի «Քաֆարչիմա»յին (3-0), Յորդանանի «Ամման»ին (3-0), Թունուզի «Անքուտ Զահապի»ին (3-0), Քուէյթի «Ռիատի Սա-

լիմիէի»ին (3-2) եւ Իրաքի «Նէտի Աքրատ»ին (3-0) դէմ: Աւարտականին, որ տեղի ունեցաւ 7 Նոյեմբերին, չինացի Լի Զի Քի երկու դիւրին յաղթանակներ արձանագրեց Պիսէնթ Օսմանի (3-0) եւ Ռադրո Մաթտիի (3-0) դէմ: Լարա Քէչէպաշեան 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Այաթոլլահ Աշրաֆէն, իսկ Մարիանա Սահակեան-Սոմոնճեան բաւական «սուղ» յաղթանակ մը արձանագրեց Ռադրո Մաթտիի դէմ (3-2):

### ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ ԿԸ ՆՈՒԻՐՈՒԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ախոյեանութեան տիտղոսին տիրանալէ ինը օր ետք, 16 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ.Ի փինկ-փոնկի աղջկանց խումբը, Լիբանանի Շրջանային Վարչութեան կատուիրակութեան մը ընկերակցութեամբ, այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին: Այցելութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.Ի աղջիկները







«Անի» եւ Հ.Մ.Ը.Մ. իրենց մրցումէն առաջ:

իրենց չհաճած բաժակը նուիրեցին Արամ Ա. Կաթողիկոսին:

Արձանագրուած յաջողութեան ի տես, Արամ Ա. Կաթողիկոս դրուատիրքով արտայայտուեցաւ աղջկանց կատարած իրագործումին մասին եւ յաջողութիւն մաղթեց անոնց՝ նորանոր տիրողոսներու տիրանալու եւ բաժակին միջոց տէր կանգնելու համար:

Եզրափակելով իր խօսքը, Արամ Ա. Կաթողիկոս մաղթեց, որ Հ.Մ.Ը.Մ. ի իւրաքանչիւր մարզիկ հպարտ զգայ միութեան շապիկը կրելուն համար, եւ ասիկա՝ ոչ միայն փինկ-փոնկի մարզիկներուն պարագային, այլեւ՝ բոլոր տեսակի մարզաձեւերուն մէջ:

Գնահատանքի ընդունելութեան ընթացքին, ատյեանները կը հատեն օրուան կարկանդակը:



### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ԱՆՈՅԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ

20 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, ախոյեան խումբին ի պատիւ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը՝ «Աղբալեան- Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ, Անթիլիաս, ներկայութեամբ լիբանանեան Ֆետերասիոններու ներկայացուցիչներու, մամլոյ պատասխանատուներու եւ մեծաթիւ հիւրերու: Ներկաներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ. ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Շրջանային Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ եւ մասնաճիւղերու վարչութիւններ:

Ընդունելութեան բացման խօսքը արտասանելով, Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Համբիկ Միսաքեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ Հ.Մ.Ը.Մ. ի աղջկանց խումբը շնորհաւորեց իր կարեւոր նուաճումին համար: Եղբ. Միսաքեան շնորհակալութեան խօսք ուղղեց «Վա-



Մրցաշարքին «Տիպար մարզիկը» քոյր Լարա Քէչէպաշեան:

նայ Զայն» ռատիոկայանին եւ «Ազդակ» օրաթերթին, որոնք լայնօրէն արձագանգեցին Հ.Մ.Ը.Մ. ի յաջողութեան:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Քէչէլիչեան: Եղբ. Քէչէլիչեան անցեալը վերլուծելով, ներկայ մարզիկներուն մէջ տեսաւ Հ.Մ.Ը.Մ. ի յաջողութիւնները շարունակողները, որոնք իրենց կարգին պիտի ջանան նորանոր յաղթանակներ արձանագրելով միջոց բարձր պահել միութեան դրօշը:

Այս առիթով խօսքեր արտասանեցին նաեւ Լիբանանի փինկ-փոնկի Ֆետե-





Ախոյեաններու ի պատիւ կազմակերպուած ընդունելութեան ընթացքին, փինկ-փոնկի Լիբանանի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Սելիմ Հաժ եւ հաշուապահ Միշել Ռոզքալլա գնահատանքի յուշանուէրներ կը յանձնեն Հ.Մ.Ը.Մ.ի մարզիչ եղբ. Բաֆֆի Մունչօլլեանին եւ Լիբանանի Շրջ. Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանին:

*րասիոնի ընդհանուր քարտուղար Սելիմ Հաժ եւ երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարար Ահմէտ Ֆաթֆաթի ներկայացուցիչ Մոհամմէտ Աուսայաթ:*

*Սօսք առնողները դրուատիքով արտայայտուեցան Հ.Մ.Ը.Մ.ի նուաճումներուն մասին եւ նորանոր յաջողութիւններ մաղթեցին անոր՝ յառաջիկային տեղի ունենալիք մրցաշարքներուն եւս:*

*Ընդունելութեան ընթացքին ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց խումբը ծանօթացնող Տի.Վի.Տի. մը: Աւարտին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:*



# Travel Ways - Egypt

## NILE CROCODILE CRUISES

*Incoming Tour Operator  
Hotel & Cruise Reservation  
Transportation  
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1  
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt  
Tel: 02 2739400/500/600  
www.travelways-egypt.com  
marketing@twaysegy.com



# ԱՆՍԱԿԱՐԿ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՎՍԵՄԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԿԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՂԲ. ՊԵՏՐՈՍ ՇԵՄԵՍԵԱՆԸ ՅԵՏ ՄԱՀՈՒ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐԷ «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ)

Սիրորեւ կու փանք Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը՝ բազմազասպակ միութեանական եղբ. Պետրոս Շեմմեսեանի յեր-մահու պարգևատրման առիթով: Պարգևատրումը փեղի ունեցաւ Կիրակի, 5 Նոյեմբեր 2006ին, եղբոր մահուան քառասունքին օրը կազմակերպուած յիշատակի հանդիսութեան մը ընթացքին, ուր խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի եւ Ժըփէյփէի մասնաճիւղերու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան արեւմտեան եղբ. Գառնիկ Միրախչեան:

**Ա**նողոք մահը անժամանակ կերպով եղբ. Պետրոս Շեմմեսեանը խեց իր ընտանիքէն, հարազատներէն եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քոյրերէն եւ եղբայրներէն: Գոյժը ցնցեց զինք ճանչցողները, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ մեծ ընտանիքը, որուն հաւատաւոր անդամներէն էր եղբ. Շեմմեսեան:

Դժուար է գաղափարակից եղբայր մը կորսնցնելը, իսկ շատ աւելի դժուար է գալն կորսնցնելէ ետք՝ հրաժեշտի խօսք արտասանելը: Քառասուն օրեր անցած են եւ տակաւին անհաւատալի է, որ եղբ. Պետրոսը ոչ եւս է: Հ.Մ.Ը.Մ.Ի-ական ժրջան եղբայրը իր կեանքին առանցքը դարձուցած էր Հ.Մ.Ը.Մ.Ի ճամբով հայրութեան ծառայելու վսեմ պարտականութիւնը: Մանկութենէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.Ի-ին՝ իբրեւ սկաւառ, եւ իր ողջ կեանքին ընթացքին ու մինչեւ վերջին օրերը, Հ.Մ.Ը.Մ.Ի-ը եղած է իր կեանքէն անբաժանելի միութիւնը: Երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի մասնաճիւղէն ներս գործելէ ետք, եղած է Հ.Մ.Ը.Մ.Ի Ժըփէյփէի մասնաճիւղի հիմնադիրներէն, հասնելով մինչեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետութեան պաշտօնին:

Եղբ. Շեմմեսեան երկար տարիներ իր մասնակցութիւնը բերած է Լիբանանի Շրջանային Ներկայացուցչական Ժողովներուն եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ժողովներուն, իր ներդրումը բերելով միութեան հզօրացման աշխատանքներուն: Եղած է փնտուռած ժողովական, իր համոզումները ամբողջն պաշտպանող եղբայր: Ան եղած է կեցուածքի ու համոզումի մարդ, այլ խօսքով՝ գաղափարապաշտ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական: Տարիներ շարունակ եղբ. Շեմմեսեան եղած է միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի աշխատակից եւ Փետրուար 2006ին, «Մարզիկ»ի 25ամեակին առիթով, արժանացած է յա-



Եղբ. Շեմմեսեան Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետութեան շրջանին, շրջապատուած՝ գործակից քոյր-եղբայրներով:

տուկ յուշանուէրի: Ան իր կարեւոր նպաստը ունեցած է նաեւ միութեան «Դաստիարակչական ուղեցոյց»ի պատրաստութեան մէջ, որուն կարեւորագոյն բաժինին՝ «Հ.Մ.Ը.Մ.Ի-ական մարզիկին տասնամեակ»ին նուիրած է արժէքաւոր յղ-լածաշարք մը «Մարզիկ»ի էջերով:

Դժուար է ամփոփել երկար տարիներու աշխատանքը եղբոր մը, որուն կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի նուիրական էջ մը եղած է: Եղբայր մը, որ իր տիպար գործունէութեամբ օրինակ հանդիսացած է նորահաս սերունդներուն, անոնց փոխանցելով անսակարկ ծառայելու վսեմագոյն օրինակը:

Սիրելի եղբ. Պետրոս, Քառասուն օրէ ի վեր դուն բաժնուած ես ընտանիքէդ, հարազատներէդ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական քոյրերէդ եւ եղբայրներէդ:



2002. Եղբ. Շեմմեսեան Հ.Մ.Լ.Մ.ի Բիրականի բանակավայրը այցելութեան պահուն:

Բացակայութիւնդ, անկասկած, մեծապէս զգալի է քեզ ճանչցող եւ քեզի հետ աշխատած սիրելիներուդ սրտին եւ կեանքին մէջ: Սակայն, ակամայ բացակայութեանդ առնթեր, միխթարական է այն իրողութիւնը, որ դուն եղար Հ.Մ.Լ.Մ.ի վիթխարի ծառին հաստափոր ճիւղերէն մէկը, որ իր կարգին ծիւղեր արձակեց հայրենիքէն հեռու՝ Լիբանանի մէջ եւ իր աւելջը տուաւ այդ ծիւղերը ուռճացնելու եւ բազմացնելու համար:

Վկայ ներկայ Հ.Մ.Լ.Մ.ական քոյրերն ու եղբայրները, որոնք այս պահուն եկած են իրենց յարգանքի տուրքը մատուցելու իրենց դաստիարակ եղբոր, օրինակ առնելու եւ իրենց կարգին յաջորդող սերունդներուն փոխանցելու Հ.Մ.Լ.Մ.ականի իրենց դաստիարակութիւնը, քու եւ նմաններուդ սրբազան աւանդը: Հրաժեշտովդ Հ.Մ.Լ.Մ.ը կը կորսնցնէ հաւատաւոր միութենական մը, իսկ հայ ժողովուրդը՝ անձնագոհ զաւակ մը, որուն ամբողջ կեանքը եղաւ անսակարկ նուիրաբերում՝ ազգային ընդհանրական արժէքներու եւ սրբութիւններու:

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, յանուն միութեան աշխարհասփիւռ շրջաններուն եւ մասնաճիւղերուն, կու գայ այս առթիւ իր խորին ցաւակցութիւնները յայտնելու եղբոր այրին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն: Ցաւակցութիւններ նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի ընտանիքին, որ խորապէս կը սգայ եղբ. Շեմմեսեանին կորուստը:

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը եղբ. Պետրոս Շեմմեսեանին անսակարկ եւ նուիրեալ ծառայութիւնը զնահատելով, որոշած էր զայն պարգեւատրել, սակայն Լիբանանի վերջին դէպքերուն պատճառով, պարգեւատրումը օրին յետաձգուեցաւ: Այսօր, դժբախտաբար, յետ մահու գինք կը պարգեւատրենք միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Յիշատակդ միշտ անմար պիտի մնայ Հ.Մ.Լ.Մ.ականներու սրտին եւ մտքին մէջ, թանկագին եղբայր:

**BDF** ••••


**SUD S.A.L** AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԵԾ ԿՈՐՈՒՍԸ

(ԵՂՔ. ՊԵՏՐՈՍ ՇԵՄՄԵՍԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի  
Շրջանային Վարչություն  
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

**2**006 ը մեծ կորուստներու տարին եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին համար: Այս տարի անվերադարձ մեկնեցան շատ սիրելի ու անփոխարինելի դէմքեր՝ եղբայրներ Կարօ Թիւթիւնճեան, Ժան Պէլեան, Յարութիւն Գեղարդ, Գօգօ Նալպանտեան, Գէորգ Գանտահարեան, Անդրանիկ Ուրֆարեան, Յարութիւն Թազուրեան եւ ուրիշներ:

Իսկ ահա, եղբ. Պետրոս Շեմմեսեան եւս մնաք բարով ըսաւ մեզի ու մեկնեցաւ առյաւելէս:

Ի՞նչպէս կրնանք Հ.Մ.Ը.Մ.Ի Ներկայացուցչական, Շրջանային կամ Պատգամաւորական Ժողով մը պատկերացնել առանց եղբ. Շեմմեսեանին, որ յիշեալ ժողովներուն համեմն էր, աղն ու պղպեղն էր: Տէ՛րն էր ու ծառան այս միութեան:

Եղբ. Շեմմեսեան Հ.Մ.Ը.Մ.Ի մէջ գործեց գայլիկական շարքերէն մինչեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետութիւն:

Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի մասնաճիւղին մէջ երկար տարիներ գործելէ ետք, ան գործօն դերակատարութիւն ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Ժըտէյ-տիի մասնաճիւղի հիմնադրութեան աշխատանքներուն մէջ, ուր ստանձնեց վարչական պարտականութիւններ եւ վարեց ատենապետութեան պաշտօն:

Իր բազմակողմանի ձիրքերն ու յատկութիւնները եղբ. Շեմմեսեան չվերապահեց ինքն իրեն, այլ՝ տուաւ իր շրջապատին, դար-



ձաւ փարոս ու լուսաւորեց չորս կողմ: Սերունդներ դաստիարակեց:

Տուաւ իր կուսակցութեան, միութեան եւ լիբանանահայութեան, գործօն մասնակցութիւն ունենալով մեր ազգային կեանքին:

Եղբ. Շեմմեսեան եղաւ կրթական մշակ, ուսուցիչ, դաստիարակ, տնօրէն, վարչական, յօդուածագիր, ատենապետ եւ մղիչ ուժ:

Քիչ մը ամէն բան, քիչ մը ամէն տեղ:

Մեզմէ ո՞վ չի գիտեր Փօլիկոթ քոլէճը, որուն յաջողութիւնն ու մակարդակը այսօր, արժանաբար, գայն կը դասէ լիբանանեան հանրածանօթ քոլէճներու շարքին: Աւանդ մը, զոր ժառանգ կը ձգէ իր որդւոյն, որպէսզի իր կարգին



Թաղման արարողութեան դամբանական խօսք կ'արտասանէ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջ. Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան:



կառչած մնայ հօրը սկզբունքներուն եւ շարունակէ անոր գործը:

Հ.Մ.Ը.Մ-ի ժրտէյտիի մասնաճիւղը, որուն հիմնաքարը դրաւ ինք՝ եղբ. Շեմմեսեան, 1974ին, անբաժան մասնիկը դարձաւ իր աօրեային ու ան հակեց մասնաճիւղին գոյատեւման, իր աչքին լոյսին պէս:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ, կարճ ժամանակի մէջ ան իր վարչական եղբայրներուն աջակցութեամբ իրագործեց կարգ մը ծրագիրներ, որոնց արդիւնաբերութենէն բաժին ձգեց իրերայաջորդ Շրջանային Վարչութիւններու:

Եղբ. Շեմմեսեան ունէր անբասիր նկարագիր, բարի եւ եղբայրասէր ոգի, իւրայատուկ ձեւով՝ առականերով ու առածներով առաջարկներ ներկայացնելու ոճ մը, որ ընդունելի կը դառնար բոլորին կողմէ:

Այս բոլորը զինք բարձրացուցած էին պատուանդանի մը, որուն համար ան կ'արժանանար բոլորին ջերմ յարգանքին ու սիրոյն:



Եղբայր Շեմմեսեան կ'ըսէր՝ թիկունք-թիկունքի տալով է, որ մեծ գործեր կ'իրականացուին եւ ծրագիրներ կը յաջողին:

Խոր հաւատք ունենալով «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին, ան համոզուած էր, որ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը լաւագոյն երաշխիքն է ազգային կեանքի յարատեւութեան:

Եղբ. Շեմմեսեան վերջին քառասուն տարիներուն մնալուն ներկայութիւն էր Հ.Մ.Ը.Մ-ի ժողովներուն, մինչեւ իր անողոք հիւանդութիւնը, որուն պատճառով դառնութիւնները յոգնեցուցին զինք: Այնուամենայնիւ, ան ապրեցաւ եւ ուրախացաւ Հ.Մ.Ը.Մ-ի լուրերով եւ նուաճումներով, այս անգամ անկողինէն շարունակելով իր դաստիարակիչ յօդուածները առաքել «Ազդակ»ին եւ «Մարգիկ»ին:

Եղբ. Շեմմեսեան այսօր անդարձ բաժնուած է մեզմէ, իր ետին ձգելով անկրկնելի բարի յուշեր ու յիշատակներ, որոնք երկար ատեն թարմ պիտի մնան մեր հոգիներուն մէջ:

Վարձքդ կատար սիրելի՛ եղբայր, հողը թեթեւ գայ վրագ:

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating/air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



# «ՔՈՅՐԵՐ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ, ՍԻՐԵՑԷՔ ԶԻՐԱՐ»

(ԵՂԲ. ՊԵՏՐՈՍ ՇԵՄՄԵՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

## Լեւոն Թաշճեան ԱՅՆՃԱՐ

**Ա**մբողջով էլ վեր կը փնտռեմ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ եղբայրս՝ եղբ. Պետրոս Շեմմեսեանը: Միշտ կը փնտռէի զինք, սակայն այս անգամ յուսահատօրէն կը փնտռեմ, որովհետեւ զինք կորսնցուցած եմ յաւիտեան:

Տարիներ առաջ ինձի ըսաւ. «Եղբայր Լեւոն, ես հիւանդ եմ, տարուէ տարի կը սկարանամ»: Խօսքերուն հետ աչքերը լեցուեցան: Գիտէ՞ր հիւանդութեան մահացու ըլլալը: Ես, յուզումս հագիւ զսպելով, ըսի իրեն. «Է՛հ, եղբայր Պետրոս, ի՞նչ կ'ըսես, աշխարհը լայն է, չի տանիր քեզ»:

Յաճախ միասին կ'ըլլայինք, երբ ինք Այնճար գար կամ ես Պէյրուս երթայի, անպայման պիտի հանդիպէինք իրարու: Պէյրուս ըլլար թէ Այնճար, օրական հինգէն եօթը քիլոմէթր կը քայլէր: Վերջին չըմանին ա՛լ սկարացած էր, չէր կրնար քայլել: Օր մը նստած էինք իր տան բակի ընկուզենիին տակ, մտերմօրէն կը խօսակցէինք, երբ յանկարծ ըսաւ. «Եղբայր Լեւոն, կը խնդրեմ Աստուծմէ, որ այս չորս մէթրը չառնէ ինձմէ»: Կ'ակնարկէր հիւրասրահէն բաղնիք երթալու միջոցին:

Եղբայր Պետրոս Այնճարի Յառաջ - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանին մէջ եղած է անգլերէնի եւ մարզանքի ուսուցիչս: Եղած է նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղի ակթիվի մարզիչս: Բոլոր մարզիկները կը յարգէին զինք, որովհետեւ միշտ ժպտաղէմ կը դիմաւորէր մեզ:

1970ին, որոշեցի աշխատելու համար Պէյրուս երթալ: Երբ միտքս պարզեցի իրեն, ինձի ըսաւ. քեզ կը տանիմ Հ.Մ.Ը.Մ-ի քաղաքի ակումբը:

Տարաւ եւ յանձնեց եղբայր Վարդգէս Էսկիպաչեանին, ըսելով՝ «Եղբայր Վարդգէս, քեզ կը յանձնեմ երկար վազքի Այնճարի լաւագոյն մարզիկը՝ եղբ. Լեւոն Թաշճեանը»: Իր քաջախիղճանքին շնորհիւ ես տիրացայ տասը հազար մէթր վազքի Լիբանանի արտօնատնութեան:

Մայիս 28ի անցնող տարուան փառատօնին, երբ իրեն հանդիպեցայ, ըսի. «Եղբայր Պետրոս, փառատօնին պիտի երթա՞մ»: Ըսաւ. «Եղբայր Լեւոն, հրաւէր ունիմ, բայց չեմ կրնար աստիճանները ելլել: Ես ըսելիքս փոխանցած եմ Շրջանային Վարչութեան»:

Փառատօնին օրը, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, երբ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի եւ Այնճարի շեփորախումբերուն առաջնորդութեամբ կը տողանցէին սկառուներն ու մարզիկները՝ լիբանանեան, Եռագոյն եւ Հ.Մ.Ը.Մ-ի



Եղբ. Շեմմեսեանի վերջին լուսանկարներէն: Լեւոն Թաշճեան եւ Պետրոս Շեմմեսեան մտերմիկ հանդիպումի ընթացքին:

դրօշներով, ժողովուրդին բուռն ծափահարութիւններուն ընդմէջէն, բարձրախօսէն լուեցաւ ձայն մը, որ կ'ըսէր. սիրելի՛ ներկաներ, եղբայր Պետրոս Շեմմեսեանը մեր մէջ չէ այսօր, սակայն մեզի փոխանցած է իր ըսելիքը, մենք ալ մեր կարգին զայն կը փոխանցենք ձեզի. «Հ.Մ.Ը.Մ-ի ակումբին մէջ կը պատրաստուին ոչ միայն սկառուներ ու մարզիկներ, այլ նաեւ՝ կը պատրաստուին ազգին նուիրեալ ազատամարտիկներ, որոնք կը զոհաբերեն իրենց կեանքը, ինչպէս եղբայր Պետիկ Իննէեանը, իսկ Արցախի ազատագրութեան մարտերուն՝ եղբայրներ Վիգեն Զաքարեանը, Վարդան Բախշեանը եւ ուրիշներ...»:

Եղբայր Պետրոսին ասպարէզը թէեւ Պէյրուսի մէջ էր, սակայն հոգևոր սրտով ան կապուած էր Այնճարին, եւ այդ պատճառով իր վերջին ամիսները ան անցուց Այնճարի մէջ: Այդ միջոցին Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի վարչութիւնը զինք պատուելու համար, որոշեց առիթով մը, իբրեւ յարգանքի արտայայտութիւն, շեփորախումբով իր տան առջեւ իրեն ի պատիւ նուազել: Երբ շեփորախումբը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները նուազել, թէեւ ուժաթափ, սակայն յոտընկայս, արցունքոտ աչքերով պատուի կանգնեցաւ իր կնոջ՝ Գոհարին հետ:

Երբ շեփորախումբը աւարտեց նուազը, յոյսի նշոյլներ երևցան արցունքոտ աչքերուն մէջ ու ոգեւորուած՝ ըսաւ. «Միտքի քոյրեր եւ եղբայրներ, յիսուն տարուան աշխատանքս հիմա՝ ե որ կ'արժեւորուի, ապրի՛ք, քոյրեր եւ եղբայրներ, սիրեցե՛ք զիրար իբրեւ քոյրեր ու եղբայրներ...», ու ա՛լ չկարողացաւ խօսիլ:

Բոլոր քոյրերն ու եղբայրները յուզուած էին: Շատերը կ'արտասուէին:

# ՊԵՏՐՈՍ ՇԵՄՄԵՍԵԱՆԻ ԱՆՄԱՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եսայի Հաւաթեան ԱՅՆՃԱՐ

**Ա**շնանային տերեւաթափին կորսնցուցինք Այնճարի եւ լիբանանահայութեան արժանաւոր զաւակներէն մէկը: Հ.Մ.Լ.Մ.ը կորսնցուց իր գործունեայ եւ հաւատաւոր եղբայրներէն մէկը: Հ.Մ.Լ.Մ.ի մէջ բազմաթիւ պարտականութիւններ ըստանձնած եղբայր Պետրոս Շեմմեսեանը՝ սկսելով Հ.Մ.Լ.Մ.ի Այնճարի մասնաճիւղի շարքերէն, ան եղած էր յանձնախումբի անդամ, վարչական, ատենապետ, Շրջանային յանձնախումբերու անդամ եւ ատենապետ, Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ: Կարճ վաստակաւոր Հ.Մ.Լ.Մ.ական: Մարզական կեանքը իր նախասիրութիւնն էր եւ ինք ոգին էր այդ կեանքին՝ միշտ պատրաստ մրցումներ եւ մարզահանդէսներ կազմակերպելու:

Այսօր դժուար է պատկերացնել Հ.Մ.Լ.Մ.ի Այնճարի եւ Լիբանանի շրջանը առանց եղբայր Պետրոսին:

Մեր սերունդին համար, մարզանքի ուսուցիչ էր եւ գիւղին մարմնամարզի ոգին: Աթլէթի մրցումներու մասին մենք իրմէ խմացանք եւ Այնճարի մէջ ինք կազմակերպեց այդ մրցումները:

Ազգային վարժարանը կորսնցուց իր երբեմնի ուսուցիչը եւ խնամակալը: Ուսուցչութիւնը եւ կրթական կեանքը իր առաքելութիւնն էր, եւ այդպէս ալ մնաց մինչեւ իր կեանքին վերջը: Մնաց միշտ կրթական մշակ, միշտ ուսումին ջատագով, դպրոցի կողքին եւ մանաւանդ՝ հայ դպրոցին:

Գործեց ի խնդիր նոր սերունդի կրթութեան եւ դաստիարակութեան: Ուսումը նկատեց փրկութեան բանալի:

Այնճարի մէջ ստեղծեց գիշերային դպրոց, որ ժամանակի ընթացքին ընդարձակուեցաւ՝ հասնելով Պէյրութ եւ վերածուելով Փոլիկլոթ կրթական հաստատութեան, զոր ժամանակի ընթացքին զարգացուց եւ վերածեց կրթական կարեւոր կեդրոնի:

Գիւղացի այս աղքատ տղուն համար եղածը հպարտութիւն ներշնչող իրագործում էր:

Հ.Յ.Դաշնակցութիւնը կորսնցուց իր հաւատաւոր ընկերներէն մէկը: Կորուստ «Կարմիր Լեռ» կոմիտէին եւ ամբողջ



Եղբ. Շեմմեսեան Այնճարի հիմնադրութեան 65ամեակի հանդիսութեան մը ընթացքին:

Լիբանանին համար: Եղբ. Պետրոսը գործունեայ եւ պայքարող կուսակցական եղաւ, ստանձնեց բազմաթիւ պարտականութիւններ:

Գործունեայ եւ հաւատարիմ կուսակցական մնաց միշտ եւ բարձր պահեց Դաշնակցութեան դրօշը:

Այնճարը եւ համայն մուսալեռացիները կորսնցուցին իրենց արժանաւոր զաւակներէն մէկը: Եղբ. Պետրոսը այն քիչերէն էր, որ համալսարանական ուսում ստանալէ ետք կուսակցութեանը իր գիւղին, այլ մնաց միշտ անոր կողքին եւ իր մէջ կենդանի մնաց մուսալեռացիներու հպարտ ոգին: Վերջին տասնամեակներուն, Պէյրութ բնակելով հանդերձ, շաբաթավերջերուն միշտ Այնճար եկաւ, քաղց պարտէզներուն մէջ եւ հպարտացաւ գիւղին յառաջդիմութեամբ:

Վերջապէս, եղբ. Պետրոս պայքարող մարդու լաւագոյն օրինակներէն էր: Մարդ, որ եկած էր աղքատ ընտանիքէ, բայց աշխատանքով ճեղքեց իր կեանքի ճամբան եւ աստիճանաբար գրաւեց յաջողութեան բարձունքներ: Արժանապատիւ կեանքի արդար օրինակ:

Միրելի՛ եղբ. Պետրոս, Մխիթարական մէկ խօսք ունիմ պարագաներուդ՝ Քու շունչդ կենդանի է մեր մէջ եւ գործդ պիտի շարունակենք:

Հպարտ ենք քեզի պէս եղբայր մը ունեցած ըլլալու:



# ԾԱՌԱՅԱՍԷՐ, ԱՌԱՔԻՆԻ ԵՂՔՕՐ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ԵՂՔ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԻՈՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

## Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչություն ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Ասում ենք մահ,  
Ասում ենք ու չենք փախապանակում...  
Ասում ենք մեզ էլ կը գայ  
Ասում ու չենք փախապանակում:

### Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

**Վ**երոյիչեալ թերահաւատութեամբ պարելէ ետք, մահուան իրականութեան դէմ յանդիման կու գանք, երբ մեր մօտիկներէն ու հարազատներէն մէկը յանկարծ կը հեռանայ՝ անվերադարձ մեկնումով մը:

Անսպասելի ու վաղահաս եղաւ եղբ. Յարութիւն Թագևորեանի մահը:

Դաժան են մահն ու ճակատագիրը:

Անոնք անժամանակ կերպով մեզմէ յաւէտ խլեցին բարի եղբայր մը, ընտանիքի հայր մը եւ ազնիւ հայրողի մը, որ սիրուած էր իր շրջապատին կողմէ՝ յարգանք ու սկինածանք

պարտադրելով իր անձին նկատմամբ:

Բոլոր զինք ճանչցողները կրնան վկայել իր ազգասիրութեան ու ծառայասիրութեան ոգիին մասին:

Ժողովական կեանքի ու ձեռնարկներու իբրեւ քաջալեր, ան ունէր իւրապատուկ ներկայութիւն, որով կը նպաստէր իր պատկանած միութեան:

Կարելի է շատ երկար գրել ու արտայայտուիլ եղբոր Հ.Մ.-Ը.Մ.ական գործունէութեան տարբեր հանգրուաններուն մասին՝ Հ.Մ.-Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի Սկսուտական Խորհուրդի ատենապետութենէն մինչեւ Հ.Մ.-Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամակցութիւն եւ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական ճիւղ մարզախաղերու (Պէյրութ, 2001) կազմակերպման մասնակցութիւն:

Սիրելի եղբայր Յարութիւն, այս գրութիւնը պիտի սփոփէ մեր ցաւն ու վիշտը՝ անակնկալ մեկնումիդ ի լուր:

Այսօր անգամ մը եւս կը վկայենք ընկերային ու մարդկային անժխտելի արժանիքներուդ մասին:

Թէեւ դուն չկաս այլեւս, սակայն միութենական պարկեշտ մարդու հաւատքիդ, համոզումներուդ, գիտակից ու ժողովրդաճանուէր ծառայութեանդ պատկերը միշտ կը մնայ Հ.Մ.-Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին եւ յատկապէս քեզի այնքան սիրելի՝ Անթիլիասի մասնաճիւղին մօտ:

Մենք միշտ պիտի յիշենք քեզ: Անմահացորդ ու անշահախնդիր Հ.Մ.-Ը.Մ.ական մարդու վաստակը օրինակ պիտի դառնայ եւ ոգեւնչէ յետնորդ սերունդները:

Վարձքդ կատար սիրելի եղբայր: Խուճկ ու մոմ անմեռ յիշատակիդ:



1997. Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկսուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Թագևորեան կ'ողջունէ Պուրճ Համուտի մասնաճիւղի վերամուտը:

# ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## Սգակիր մը ՊԵՅՐՈՒԹ

**Ե**րկու ամիսէ ի վեր չկայ այլեւս եղբ. Կարպիս Գալայճեանը, որուն համար ատենին եղբ. Երուանդ Տէմիրճեան ըսած է՝ «Գամիշլի կը նշանակէ Կարպիս Գալայճեան: Կարպիս Գալայճեան կը նշանակէ Գամիշլի»: 1 Հոկտեմբեր 2006ին ան յաւէտ բաժնուեցաւ իր հարազատներէն, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքէն եւ Հ.Յ.Դ.ի գաղափարական շրջանակէն: Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 4 Հոկտեմբերին, Հալէպի մէջ, ազգային-միութենական իր վաստակին վայել շուքով:

Կլայազործ հօր գաւակ եղբ. Կարպիս ծնած էր Տիգրանակերտ, 1925ին: Չորս տարեկան հասակին, փախստական միջոցներով ծնողքին հետ կը հաստատուի Հասիչէ, ուր մինչեւ 11 տարեկան կ'ապրի առանց ամբողջական ուսման: 1936ին բախտը կը ժպտի իրեն եւ կը դառնայ Սուրիահայ Օգնութեան Խաչի սան: Հայ չքաւոր անուս փոքրիկներու ապագայով մտահոգ, Օգնութեան Խաչը ուրիշներու կարգին զայն եւս կը դրկէ Հալէպի Պատասպարան, ուր 1936էն 1944 ան կը յաճախէ Հայկազեան վարժարան, ապա՝ Լիսէ Ֆրանսէ: Հօրը մասէ-լան պատճառով ուսումը կ'իսատ կը ձգէ եւ կը վերադառնայ Հասիչէ:

Այնուհետեւ, երկար տարիներ եղբ. Կարպիսին կրթական եւ միութենական գործունէութեան հարազատ ասպարէզը կը դառնայ Ճէզիրէի անապատային շրջանի հայաբընակ գիւղաբաղաքներու շրջագիծը:

Գամիշլիի այդ օրերու Առաջնորդ Խորէն Սրբազանի (հետագային՝ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) առաջարկով ան կը պաշտօնավարէ Թէլ Պրաք կոչուող հայկական գիւղին վարժարանին մէջ: Ուսուցիչի պաշտօնին կողքին, անմիջական մտահո-



1948. Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի ֆութպոլի խումբը միջ-մասնաճիւղային մրցումներուն, Հալէպ: Եղբ. Գալայճեան (խմբապետ) նստած՝ ձախէն առաջինը

գութիւնը կ'ըլլայ հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի Թէլ Պրաքի մասնաճիւղը: Հալէպի մէջ ուսանողութեան շրջանին, ան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ական եւ 1936էն սկսեալ կը խաղայ երկրորդականներու կրտսերագոյն «Շանթ» խումբէն:

Ժամանակ մը Օ.Շ.Ք.ի պաշտօնեայ դառնալէ ետք, 1947ին ուսուցչութեան պաշտօն կը վարէ Հասիչէի հայկական վարժարանին մէջ: Հոն եւս Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ իր մէջ եռացող սէրը հանգիստ չի տար իրեն եւ կը նախաձեռնէ արդէն իսկ գոյութիւն ունեցող սկստական կորիզը զօրացնելու եւ զայն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վերածելու աշխատանքին:

Տարի մը ետք, 1948ին, Միհրան Հերարտեան իրեն կ'առաջարկէ Գամիշլիի Ազգային վարժարանի տնօրէնի նախանձեղի պաշտօնը, բայց եղբ. Կարպիս կը մերժէ եւ կը ստանձնէ պարզ ուսուցիչի պաշտօն՝ համաձայնուելով վարժարանին մէջ:

Գամիշլիի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը արդէն գոյութիւն ունէր: Եղբ. Կարպիս ան-

Համեստ ու նուիրեալ այս եղբայրը 25 տարի անընդհատ, Թէլ Պրաքէն Հասիչէ, Հասիչէէն Գամիշլի, Տէր Ձօր, Արաք Բունար եւ բազմաթիւ այլ գիւղեր, որոնք կը տարածուին աստղերու չափ կարիճ ապրեցնող այդ անծայրածիր անապատին մէջ, քրտնաթոր շրջած է իբրեւ մարզիկ, ապա վարչական, հուսկ՝ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ, ժառանգելու համար Յ.Մ.Ը.Մ.ին:



միջապէս մաս կը կազմէ տեղւոյն մասնաճիւղին եւ 1949ին կը դառնայ վարչութեան ատենապետ՝ մինչեւ 1961ի ծանօթ դէպքերը: Ակումբը կը փակուի եւ կը կնքուի պետութեան կողմէ: Հազիւ տարի մը ետք, սակայն, Հ.Մ.Ը.Մ. կը վերսկսի իր աշխատանքներուն, այս անգամ բոլորովին տարբեր պայմաններու մէջ:

Եղբ. Կարպիս անսպառ եռանդով եւ անսահման նուիրումով ամբողջ 25 տարի Հ.Մ.Ը.Մ.ականի գործունէութիւն կը տանի՝ յաճախ իբրեւ ատենապետ:

Ան մնայուն գործակիցը եղած է եղբ. Լուտեր Մասպանանճեանին, որուն Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր գործիչի պատասխանատուութիւնը վստահուած էր Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ, Սուրիոյ բոլոր կազմերուն համար:

Եղբ. Կարպիս Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեանէն պաշտօնապէս լիազօրուած է ձէջիւրէի բոլոր շրջանները այցելելու, կազմակերպական աշխատանք տանելու, հարցեր լուծելու եւ ցուցմունքներ տալու համար:

1915ի Եղեռնին զոհ գացած բազմահազար անմեղ հայորդիներու անթաղ մնացած, ամէն քայլափոխի ցցուող ոսկորներու այդ կիզիչ անապատին մէջ, որ Տէր Զօր կը կոչուի, եղբ. Կարպիս հերոսութեան համազօր գործ կատարած է Հ.Մ.Ը.Մ.ի կորիզներ կամ մասնաճիւղեր յառաջացնելով եւ անոնց յարատեւութիւնը ապահովելով:

Համեստ ու նուիրեալ այս եղբայրը 25 տարի անընդհատ,

Թէլ Պրաքէն Հասիչէ, Հասիչէն Գամիշլի, Տէր Զօր, Արաբ Բունար եւ բազմաթիւ այլ գիւղեր, որոնք կը տարածուին աստղերու չափ կարիճ ապրեցնող այդ անծայրածիր անապատին մէջ, քրտնաթոր շրջած է իբրեւ մարզիկ, ապա վարչական, հուսկ՝ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ, ծառայելու համար Հ.Մ.Ը.Մ.ին:

Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեանէն անկախ, եղբ. Կարպիս տարբեր ժամանակներու եղած է Գամիշլիի հայկական վարժարանի եւ եկեղեցւոյ թաղական ու հոգաբարձու: Հոգաբարձութեան շրջանին, իր եւ կազմի ընկերներուն ջանքերով վարժարանը օժտուած է միջնակարգ բաժինով: Ան ընտրուած է Բերիոյ Թեմի Ազգային Գաւառական Ժողովի անդամ:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական, եղբ. Կարպիս իր ծառայութիւններուն համար արժանացած է միութեան «Մառայութեան» շքանշանին:

1974ին, ընտանեօք ան կը փոխադրուի Լիբանան եւ կը հաստատուի Ժիպէյլ, ուր 12 տարի կը ստանձնէ «Թուչնոց բոյն»ի տնօրէնութիւնը: Ան եղած է տիպար հայր մը եւ անբասիր միութենականի արժանիքներով օժտուած միութենական մը:

Վերջին տարիներուն անողոք հիւանդութիւնը տառապալի եղաւ եղբ. Կարպիսին եւ ընտանիքին համար: Իր մահով Հ.Մ.Ը.Մ. կորսնցուց հաւատաւոր ու վաստակաշատ եղբայր մը:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի՛ եղբայր:

**Maison Mere**  
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt  
Tel: (202) 3913296 - 3918542  
Fax: (202) 3903899

**Ramses Hilton**  
Tel: (202) 5758000 - 5744400  
Direct: (202) 5751790

**Zamalek**  
11 Hassan Sabry st., Degla center  
Tel: (202) 3322121 - 3322130  
Fax: (202) 3322130



**VARTAN  
KAZANDJIAN**

**KAZANDJIAN**

E-mail: [vartan@intouch.com](mailto:vartan@intouch.com)      **Joillier-Orfevre Fonde en 1920**

# ԵՂԲ. ՆԱԶԱՐԷԹ ԿԵԼՈՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գ. Ն.  
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

**2006**ի տերեւաթափը անողոք եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին համար: Իրարու ետեւէ անդարձ մեկնեցան հաւատաւոր քանի մը եղբայրներ, որոնք միութենական երկար տարիներ քերք ու վաստակ ունէին իրենց ետին, ծանօթ էին իրենց անսակարկ ծառայութեամբ եւ նուիրումով: Մեկնողներէն մէկն ալ եղբ. Նազարէթ Կէլոյեանն էր, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի երկարամեայ անդամը, նախկին վարչականն ու ատենապետը: Քանի մը ամիսէ ի վեր ան չկ'այ ալ, սակայն իր յիշատակը անջնջելի կը մնայ զայն ճանչցողներուն մօտ:

Ամէն անգամ որ «Բարե՛ւ եղբ. Նազարէթ» կ'ըսէինք, պատասխանը կ'ըլլար՝ «Աստուծոյ բարին եղբերս» (Ուրֆայի բարբառով): Եղբ. Նազարէթ տարիքով իրմէ փոքրերը իր եղբայրները կամ զաւակները կը նկատէր. գաղտնիք չունէր, իր գիտելիքները անսակարկ կերպով բոլորին սեփականութիւնը կը դարձնէր՝ սկսելով Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի Սկստական Խորհուրդէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի եւ Ուրֆայի Հայրենակցական Միութեան մէջ ձեռք ձգած իր փորձառութիւնները: Հաւատարիմ էր իր պատկանած միութիւններուն եւ շրջապատին: Չէր ուզեր գործի որեւէ ձախողութիւն, բժախնդիր էր, կը յարգէր բոլորին տեսակէտները եւ իր պարտականութեանց մէջ երբեք չէր թերանար: Ան կը քաջալերէր

բոլոր ձեռնարկները: Եղբ. Նազարէթ եղած էր Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան եւ Ուրֆայի Հայրենակցական Միութեան ատենապետ, ինչպէս՝ նաեւ Նոր Մարաշի Ազգային Սրբոց Քառասնից Մանկանց Վարժարանի հոգաբարձութեան ատենապետ:

Հաւատաւոր եղբայրը կատարեալ էր պատասխանատուի իր դերերուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան կազմակերպած 70ամեակի ձեռնարկին, 2006ի Յունիսին, ան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան, իբրեւ վաստակաշատ նուիրեալ: Ուրֆայի Հայրենակցական Միութեան վարչութեան կողմէ եւս ան պարգևատրուած էր յատուկ մետալով:

Լուսաւոր կանթեղ մըն էր եղբ. Նազարէթ, երբեմն զօրաւոր ու ազդու, երբեմն ալ՝ մեղմ ու շիջող: Իր տուած խորհուրդները եւ ուղղութիւնները միշտ վառ պիտի մնան մեր մէջ: Իրեն կ'ըսէինք, ինչ որ ինք կ'ըսէր ննջեցեալներուն. «Աստուած ողորմի հոգուդ: Հողը թեթեւ գայ վրէդ»:



1980ականներու սկիզբ. Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղը կը նշէ «Մայրերու Օր»: Եղբ. Նազարէթ, նստած, Բ. շարք, աջէն առաջինը:

**ՍՏԱՅԱՆՔ**

**ԹԱՅ ԱՌԱՒՕՏ**

**Յարութիւն Յարութիւնեան**

Երեւան, «Լուսակն»  
հրատարակչութիւն, 2006:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԷՄՊՐԻՃԻ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

## Յոյեր Փանոսեան ՔԷՄՊՐԻՃ

**Ե**թը տարիներու երկար դադարէ մը ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Քէմպրիճի մասնաճիւղը այս տարի վերակազմակերպուելով սկսաւ աշխոյժ գործունէութեան՝ իր շուրջ հաւաքելով մանուկներ, պատանիներ ու երիտասարդներ: Շաբաթական դրուժեամբ կազմակերպուած մարզական խաղերն ու մրցումները կը քաջալերեն հայ պատանին միանալու Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն եւ «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» նշանաբանով առաջնորդուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Քէմպրիճի վարչութիւնն ու անդամները ամէն ջանք ի գործ կը դնեն մատուցել սերունդին մէջ սերմանելու համար հայկականութեան ոգին: Շաբաթ, 30 Սեպտեմբերին, Քէմպրիճի Հայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ վերակազմեալ մասնաճիւղին առաջին պարահանդէսը, որուն ներկայ գտնուեցան շրջանի հոգեւոր հովի-

ները, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, պատկան մարմիններու ներկայացուցիչներ, Թորոնթոյէն ժամանած խմբապետ եղբայրներ եւ աւելի քան 200 հայորդիներ: Պարահանդէսին բացումը կատարեց վարչութեան անդամ եղբ. Սամսոն Քահնէճեան: Ան իր խօսքին սկիզբը հրաւիրեց շրջանի հոգեւոր հովիւները՝ կատարելու սեղանի օրհնութիւնը: Ապա, խօսքը շարունակելով, ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք զօրավիգ կանգնեցան մասնաճիւղին վերակազմութեան:

Եղբ. Սամսոնի խօսքէն ետք, խօսք առաւ քոյր Աստղիկ Փանոսեան (Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու 2004ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը) եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը լոկ կլոր գնդակի մը ետեւէն վազել կամ սկաուտական տարագ հագնիլ չէ, այլ՝ անոր ետին կայ պատասխանատուութեան եւ պարտականութեան հասկացողութիւն, պատկանելիութեան գիտակցութիւն»: *Խօսքը աւարտելով, քոյրը յայտնեց, թէ*


(Շար.ը՝ էջ 40)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*



**Reservations** **Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 30ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

## Հաղորդագրություն ՈՒՈԹԸՐԹԱՌԻՆ

**Հ**ՄԸՄԻ Արևելեան Միացեալ Նահանգներու 30րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ 27-29 Հոկտեմբեր 2006, Նիւ Ճըրզիի մէջ, մասնակցութեամբ՝ շրջանի տասը մասնաճիւղերու (Ալպընի, Նիւ Եորք, Նիւ Ճըրջի, Շիքակօ, Ուաշինկթըն, Պոսթըն, Տիքսոն, Փրովիտընս, Յիւլստըֆիա եւ Հարաւային Ֆլորիտա) լիազօր ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Արևելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչներու, ընդհանուրը՝ 42 անդամներ:

Խորհրդակցական ձայնով մասնակցողներու շարքին, ժողովին ներկայ էին Հ.Յ.Դ. տեղւոյն Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, Համազգայինի, ՀՕՄԻ եւ Հ.Յ.Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ, Շրջանային մարզական յանձնախումբի եւ Սկաուտ. Խորհուրդի ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ:

Ժողովին բացումը կատարեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Իշխանեան: Բարի գալուստի խօսքէն ետք ան խնդրեց, որ ժողովը ընտրէ իր դիւանը: Ժողովի մնայուն դիւանի անդամներ ընտրուեցան ատենապետներ՝ եղբայրներ Պերճ Մասոյեան եւ Յարութ Արապեան, ատենադը-

պիրներ՝ քոյրեր Օսան Դանիէլեան եւ Էլիզապէթ Տրամկոչեան:

Ներկայացուցչական ժողովի օրակարգին անցնելէ առաջ, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վահան Չալիքեան, ՀՕՄԻ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Քնար Քիլէճեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Զարմայր Սեդրակեան, Հ.Յ.Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ներկայացուցիչ Սօսի Էսաճանեան, Հ.Յ.Դ. Արևելեան Շրջանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ճան Ճերիքեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան: Խօսք առնողները բարձր գնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայապահպանման աշխատանքին մէջ, մանաւանդ Մ. Նահանգներու այլասերիչ միջոցառումներին մէջ, որ կը պահանջէ յաւելեալ ճիւղ եւ համբերութիւն: Անոնք իրենց յաջողութեան բարեմաղթութիւնները յայտնեցին ժողովին մասնաւորապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ին ընդհանրապէս, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ը մնայ պատենչի վրայ եւ շարունակէ իր ազգանուէր գործունէութիւնը:

Ապա, ժողովը սկսաւ իր աշխատանքներուն եւ առաջին հերթին ունկնդրեց տասը մասնաճիւղերու միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները: Լսեց նաեւ Շրջանային Վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը:

Տեղեկագիրներու համաձայն, շրջանը անցնող տարի ունեցած է բեղուն գործունէութիւն: Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Միացեալ Նահանգներու շրջանը ունի-

- 1295 անդամ-անդամուհիներ:



- 535 դայրիկ, արծուրիկ, սկաուտ, արենոյշ, երէց եւ պարմանուհիներ:
- 610 մարգրիկ-մարգրիկուհիներ:
- 755 աւելի մարգրական երկսեռ խումբեր՝ Փոլթալոյի, վոլիպոլի, պասքեթպոլի, փինկ-փոնկի, թենիսի եւ աթլէթի, ծիլ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթեան դասակարգերով:
- Անցնող տարի, շրջանը կազմակերպած է հետեւեալ ձեռնարկները.-
- Մասնաճիւղերու վարչական կազմերու դիւաններու խորհրդաժողով, Ուաշինկթընի մէջ:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ բանակումի նախապատրաստութեան Շրջանային սկաուտական 3 սեմինարներ, Պոսթընի, Ուաշինկթընի եւ Տիթրոյթի մէջ, նաեւ մէկ ընդհանուր սեմինար՝ Ուաշինկթընի մէջ, միջ-մասնաճիւղային խաղերու ընթացքին:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ բանակումին, որ տեղի ունեցաւ Հայաստանի մէջ, 30 Յուլիսէն 9 Օգոստոս 2006, շրջանը իր մասնակցութիւնը բերած է 91 սկաուտներով:
- Միջ-մասնաճիւղային 16րդ մարգրիկ-մարգրիկուհիներ մէջ: Խաղերուն մասնակցած են 740 մարգրիկ-մարգրիկուհիներ:
- Շրջանային սկաուտական 20րդ ընդհանուր բանակում, Պոսթընի մէջ: Բանակումին մասնակցած են 110 սկաուտներ:
- Շրջանի 30րդ Ներկայացուցչական ժողով, Նիւ Ճըրքիի մէջ:

Տեղեկագիրներու ներկայացումէն ետք, Ներկայացուցչական ժողովը շարունակեց իր աշխատանքը, մշակելով յառաջիկայ տարուան մարգրական եւ սկաուտական գործունէութեան ծրագիրները, յատկապէս նկատի ունենալով միջ-մասնաճիւղային 17րդ մարգրիկ-մարգրիկուհիներ եւ սկաուտական 21րդ ընդհանուր բանակումը: Օրակարգի յատուկ կէտ դարձաւ շրջանի հիմնադրութեան 30ամեակի նշումը 2007ին: Ժողովը անդրադարձաւ նաեւ միութեան «Մարգրիկ» ամսաթերթին, շրջանի օրացոյցին եւ Հայ Դատի գրասենեակին հետ գործակցութեան: Հ.Մ.Ը.Մ.ի այս պատկառելի ժողովը երկար ժամանակ տրամադրեց վաւերացնելու շրջանի սկաուտական ներքին Մրագիր-Կանոնագիրը: Ժողովը ներկայացուց շինիչ առաջարկներ եւ թելադրանքներ՝ բարելաւելու համար միութեան աշխատանքային զանազան մարգերը եւ ընդառաջելու համար նոր սերունդի արդար պահանջներուն:

Ժողովի աւարտին, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան գնահատեց ներկայացուցիչներու մասնակցութիւնը եւ ժողովին արձանագրած յաջողութիւնը: Դիւանը նոյնպէս յաջողութեան բարեմաղթութիւններ եւ քաջաբերական խօսքեր ուղղեց ներկայացուցիչներուն, Շրջանային Սկաուտ-Ուորհոլդին, Շրջանային մարգրական յանձնախումբին, Շրջանային Վարչութեան եւ բոլոր մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով:


ARMENIA

for private and group trips


www.saberatours.fr


- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

# Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY







11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com



48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՓՐՈՎԻՏԸՆՄԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ 25ԱՄԵԱԿԻ ՇՔԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ



## Մ. Փուլիկեան-Նարպանտեան ՓՐՈՎԻՏԸՆՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Փրովիտընսի մասնաճիւղին հիմնադրութեան 25ամեակը մեծ շուքով տօնակատարեցաւ ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 21 Հոկտեմբեր 2006ի երեկոյեան, «Ուէսթ վէյլ Ինն» ճաշատանին մէջ, հովանաւորութեամբ՝ Թեմի փոխ Առաջնորդ Անուշաւան Եպս. Դանիէլեանի եւ ներկայութեամբ՝ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Քհնյ. Պաղսարեանի: Հանդիսութեան նախագահութիւնը սիրով ստանձնած էին գաղութին հանրածանօթ ազգայիններէն, նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Արտեմիս Եփրեմեաններ:

Մօտ 280 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու ներկայութեան, երեկոն բացուեցաւ սկաուտներու եւ դրօշակներու տղանց-

քով, որմէ ետք յաջորդաբար երգուեցան ամերիկեան, հայկական եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները, կատարողութեամբ Հելէն Տայեանի եւ Մարգրիտ Ստեփանեանի: Սրբազան հօր բացման աղօթքէն ետք, վայրկեան մը լուռութեամբ յարգուեցաւ յիշատակը մասնաճիւղի հանգուցեալ հիմնադիրներուն:

25ամեակի յանձնախումբի անդամ եւ օրուան հանդիսավար եղբ. Յակոբ Խաչատուրեան բարի գալուստի խօսքէ ետք, ներկայացուց պատուոյ սեղանին հիւրերը, եկեղեցւոյ եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչները, անցեալի եւ ներկայի վարչականներն ու մարզական, սկաուտական եւ ընկերային յանձնախումբերու անդամները, ինչպէս նաեւ՝ 25ամեակի յանձնախումբի անդամները, որոնք քոյր Մանուշակ Գրիգորեանի ատենապետութեամբ՝ յաջողութեամբ պսակեցին պրոնզեայ այս յրթեանը, ճաշկերոյթ-պարահանդէսով եւ յուշամատեան գրքոյկի մը հրատարակութեամբ:

Առաջին խօսք առնողը եղաւ վարչութեան ատենապետ եղբ. Սարգիս Մինասեան: Եղբայրը փոխանցեց մասնաճիւղին շնորհակալական խօսքը, երախտագիտական զգացումներ յայտնելով բոլոր հիմնադիրներուն, անցեալի եւ ներկայի նուիրեալ անդամներուն, որոնք «Միշտ պատրաստ»՝ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը բարձր կը պահեն: Մասնաճիւղին վարչութեան կողմէ եղբայրը յատուկ յուշատախտակով պատուեց քոյր Մանուշակ Գրիգորեանը, որ սիրով յանձն առաւ համահ. Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի բանակումին շրջանի 13 սկաուտներուն

ընկերանայու պատասխանատուութիւնը: Վարչութիւնը պատուեց նաեւ եղբ. Յակոբ Տօնոյեանը, բոլոր միջոցներով Հ.Մ.Ը.Մ.ին ծառայելու իր պատրաստակամութեան իբրեւ գնահատանք:

Ապա, հանդիսավարը հրաւիրեց Սրբազան Հայրը, Տէր Հայրն ու մասնաճիւղին ատենապետը, որոնք բեմ հրաւիրեցին Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ թաղականութեան ատենապե-



Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Փոխ Առաջնորդ Անուշաւան Եպս. Դանիէլեան կը փոխանցէ իր խօսքը:



տը, Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտեի, Հ.Ե.Դ. «Վարանդեան» ուխտի, ՀՕՄԻ «Անի» եւ «Արաքս» մասնաճիւղերու, Համազգայինի, տիկնանց գոյգ օժանդակ մարմիններու եւ եկեղեցւոյ արանց «Մէնզ Քլապ»ի ներկայացուցիչները, օրուան «Թագաւորն» ու «Թագուհին»՝ Եղբ. Սարգիսն ու քոյր Արտեմիս Եփրեմեանները, ինչպէս նաեւ՝ հայկական ռատիոթամի տէր եւ տնօրէն՝ Ռազմիկ Գասպարեանը, ստանալու համար յատուկ յուշատախտակներ, մասնաճիւղին հիմնադրութենէն ի վեր իրենց ցուցաբերած եղբայրական գործակցութեան առ ի գնահատանք:


Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Սարգիս Դարբինեան խօսք առնելով շնորհաւորեց մասնաճիւղը, յատկապէս յիշելով անունները բոլոր անոնց, որոնք անցնող 25 տարիներուն սատարեցին մասնաճիւղին եւ ընդհանուր առմամբ Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին, ուղղակի թէ անուղղակի միջոցներով:

Օրուան պատուարժան նախագահը՝ եղբ. Սարգիս Եփրեմեան խօսք առնելով իր խորին շնորհակալութիւնները յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար ու փոխանցեց իր եւ ընտանիքին սրտազին շնորհաւորութիւնները, շեշտելով Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր դերը իմացական եւ հոգեկան բարձր արժանիքներու տէր սերունդներ պատրաստելու դժուար գործին մէջ: Ապա տեղի ունեցաւ մոմավառութիւն եւ օրուան պատուոյ նախագահին ու հանդիսութեան ներկայ եղող պատուոյ հիմնադիրներուն յիշատակելի խմբանկարը առնուեցաւ 25ամեակի կարկանդակին շուրջ:

Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ կոմիտաս Քհնյ. Պաղասարեան իր խօսքին մէջ դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն, անդամներուն եւ համակիրներուն 25 տարիներու տքնաջան ու արդիւնաբեր աշխատանքը, ի փառս Աստուծոյ, հայ եկեղեցւոյ եւ հայ ազգին:

25ամեակի տօնակատարութեան փայլքը աւելցուց Անուշաւան Եպս. Դանիէլեանի հովանաւորութիւնը, առիթը ստեղծելով որ Փրովիտընսի հաւատացեալ ազգայինները աւելի մօտէն ծանօթանան Սրբազան Հօր: Ան իր ոգեշունչ պատգամով նախ փոխանցեց Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի ողջոյնները, բարեմաղթանքները եւ շնորհաւորութիւնները՝ գաղութին եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, այս պրոնզեայ յրեշեանին առիթով: Սրբազան Հայրը բացատրեց «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանին իմաստն ու վեհութիւնը, շեշտելով որ «նահատակ ցեղի անմահներ» ու այս սերունդը անվախօրէն յառաջ երթալով պիտի կերտէ մեր ժողովուրդին ապագան, Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին:

Վերոյիշեալ խրատասական խօսքերէն ետք, երգիչ Արման Պաղչէճեան (Քալիֆորնիայէն) եւ իր նուագախումբը ճոխացուցին երեկոն՝ ստեղծելով մեծ խանդավառութիւն, մանաւանդ երիտասարդներուն մօտ: Դադարի պահուն տեղի ունե-



Յուշանուէրներու փոխանցում:

ցաւ 25 տարիներու յուշանկարներու սահիկներու ցուցադրութիւն, պատրաստուած՝ եղբ. Քրիստափոր Գրիգորեանի կողմէ: Ապա տեղի ունեցաւ յուշատախտակներու բաշխում, որով քոյր Թայլին Թարաքսեան եւ եղբ. Բաֆֆի Մինասեան պարգեւատրուեցան իբրեւ տարուան լաւագոյն սկաւտներ, իսկ մարզական յանձնախումբը պատուեց եղբ. Մայք Արսլանեանը եւ քոյր Սինթիա Ասքոն, իբրեւ տարուան լաւագոյն մարզիկներ: Մարզական յանձնախումբը պատուեց նաեւ քոյր Քրիստինա Արսլանեանը՝ իր տարած բացառիկ աշխատանքին համար: Ընկերային յանձնախումբը պատուեց եղբ. Արմէն Հաճիւնեանը՝ իր ունեցած գնահատելի աշխատանքին համար, անցնող տարուան ընկերային բոլոր ձեռնարկներուն: Հոսակ, յեղափոխական քանի մը երգ լսելէ ետք, ներկաները բարձր տրամադրութեամբ մեկնեցան սրահէն, ոգեւորուած ու բարձր կորովով Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական եւ պանծալի երթը շարունակելու տրամադրութեամբ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐՈՒ ՄԻՋ-ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Թղթակից  
ՀԱԼԷՊ



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ, 24 Հոկտեմբեր 2006ին, Հայկ «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան մէջ տեղի ունեցաւ Սուրիոյ մասնաճիւղերու միջ-վարչական խորհրդաժողովը: Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Հայկ պի, Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Գամիշլիի վարչութիւնները, ներկայութեամբ կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Գէորգ Կարապետեանի:

Ժողովը բացուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան լուսկեամբ յարգելու միութեան շարքերէն յաւատարմացած հին թէ նոր Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակը: Ատենապետը իր բացման խօսքին մէջ բարի գալուստի խօսք ուղղեց ներկաներուն, յոյս յայտնելով, որ խորհրդաժողովը կը ծառայէ ապագայ ծրագիրներու մշակման եւ մեծապէս կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին:

Եղբ. Տէր Աբրահամեան շնորհակալեց, որ մեր միութեան նպատակն է ֆիզիքապէս եւ բարոյապէս առողջ սերունդ դաստիարակել, պատանին թրծել առաքինի յատկութիւններով եւ հայեցի դաստիարակութեամբ, ազգասիրական եւ նուիրական ոգիով:

Մասնաճիւղերու վարչութիւնները իրենց տեղեկագիրներու ընդմէջէն ներկայացուցին շրջաններու մարզական եւ սկաուտական աշխատանքները, նաեւ՝ իրենց մասնակցութիւնը հանրամուէր ձեռնարկներու եւ ազգային տօնակատարութիւններու: Շրջանային վարչութեան ատենապետը հիշատակեց Լիզա Լալեան ներկայացուց Շրջանային վարչութեան



Խորհրդաժողովի մասնակիցներու յիշատակի նկար: Լուսանկարները՝ «Photo Pierre»ի

վեցամսեայ գործունէութեան տեղեկագիրը, նաեւ գեկուցեց կեդրոնական վարչութեան կազմակերպած՝ Միջին Արեւելքի վարչութիւններու միջ-դիւանական խորհրդաժողովին մասին:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ պի վարչութեան ատենապետ եղբ. Հայկազ Ասատուրեան, իբրեւ պետական սկաուտութեան խորհուրդի անդամ, գեկուց մը տուաւ վերակազմեալ այս շարժումին մասին, քաջախելով բոլոր մասնաճիւղերը՝ անդամակցելու սկաուտական յիշեալ շարժումին:

Խորհրդաժողովին ընթացքին արծարծուեցան սկաուտական եւ մարզական գանազան հարցեր, որոնք ամփոփուեցան քանի մը կէտերու մէջ. կազմակերպել միջ-մասնաճիւղային մարզախաղեր, սկաուտական դպրոց-բանակումներ, մանաւանդ միջ-վարչական խորհրդաժողովներ:

Ատենապետը գեկուցեց Շրջանային վարչութեան յառաջացուցած լրատուական յանձնախումբի ծրագիրին եւ գործունէութեան մասին, շնորհակալեց յանձնախումբի օժանդակութեան անհրաժեշտութեան վրայ, ի խնդիր յիշեալ յանձնախումբի յաջողութեան: Յանձնախումբին նպատակն է համացանցի յատուկ կայք էջի մէջ գետեղել Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ



չրջանի պատմութիւնը, ինչպէս նաեւ՝ մամուլի ճամբով քարոզչական աշխատանք տանիլ եւ լուրեր հայթայթել «Մարգիկ» պաշտօնաթերթին:

Շրջանային Վարչութեան հաշուապահ եղբ. Շահէ Չաղլասեան այս առիթով կատարեց հաշուապահական թելադրանքներ:

Շրջանային Վարչութիւնը մարզական գործունէութեան կողքին անհրաժեշտ նկատելով սկստական շարքերու վերելքն ու զարգացումը, իր օրակարգին մէջ արծարծեց նաեւ սկստական զանազան հարցեր, որոնք լուսաբանուեցան եղբ. Արմէն Քէօզկէրեանի կողմէ: Որոշուեցաւ Ս. Յարութեան տօնին առիթով Հայկ պի մէջ կազմակերպել միջ-մասնաճիւղային տողանցք մը, որ տարիներէ ի վեր գաղութին երազը եղած է:

Խորհրդաժողովի աւարտին, Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Գէորգ Կարապետեան, մեծապէս գնահատելով Շրջանային Վարչութեան կազմակերպած այս հանդիպումը: Եղբայրը պարտք դրաւ վարչութիւններուն



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գէորգ Կարապետեան խօսքի պահուն:

պատրաստել ղեկավարներ, հասնելու համար մեր նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին:

Խորհրդաժողովը վերջ գտաւ «Ով հայ արի» քայլերգով:



Sarkis  
or  
Paul

# SASSOUNIAN INC.

## Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street  
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220  
(213) 627-1206  
Outside Ca: 1-800-544-4419  
Fax: (213) 623-6981

[www.sassouniantools.com](http://www.sassouniantools.com)

E-mail: [info@sassouniantools.com](mailto:info@sassouniantools.com)



# ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ ԵԱԳՈՒՊԻԷԻ ՄԷՉ

Լուսին Սարգիսեան  
ՀԱԼԷՊ

**Զ**մեռնային դպրոց-բանակում: Բանակում մը, որ շատ մը հարցադրումներ կրնայ ստեղծել ծնողներու եւ ընդհանրապէս համակիրներու մտքերուն մէջ:

Արդեօք ո՞ւր պիտի քնանան:  
Ինչպիսի՞ գործունէութիւն պիտի ունենան:  
Հապա՞ եթէ անձրեւէ:

Հարցադրումներ, որոնք շատ դիւրութեամբ կրնան իրենց պատասխանները ունենալ դպրոց-բանակումէն վերադարձած գայլիկի կամ արծուիկի մը կողմէ:

Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի «Գրիգոր Յակոբեան» գայլիկ-արծուիկ միաւորի կարմիր, կապոյտ, նարնջագոյն վոճմակ-երամները այս տարեշրջանի ձմեռնային իրենց դպրոց-բանակումը կատարեցին 23-25 Հոկտեմբեր 2006ին, Եագուպիէի Ս. Հռիփսիմեանց եկեղեցւոյ եւ Ազգ. Վերածընունդ վարժարանին մէջ:

Դպրոց-բանակումին յայտագիրը կ'ընդգրկէր զանազան բաժիններ, որոնց միջոցով գայլիկներն ու արծուիկները ազգային, կրօնական, գիտական եւ սկստական նիւթերու կողքին, առիթը ունեցան զարգացնելու Ֆիզիքական իրենց կարողութիւնները: Անոնք ունեցան նաեւ խաղերու, թելեմաչի, ռէլիի եւ հարց-պատասխանի տրամադրուած ժամանակ:

Յայտագրի գրեթէ բոլոր բաժիններուն իրենց մասնակցութիւնը բերին շրջանի Ազգ. Վերածընունդ դպրոցէն 23 աշակերտ-աշակերտուհիներ, որոնք միջոցառումն շատ արագ ըն-



Գայլիկներն ու արծուիկները կը ներկեն գիւղին մայրերուն եզերքները:

տելանալով, վայելեցին սկստական յայտագիրներով լեցուն երեք օրեր:

Դպրոց-բանակումին առաջին օրը գայլիկներն ու արծուիկները տեղաւորուեցան իրենց վայրերուն մէջ եւ վերջիչեցին կարգապահական որոշ վարժութիւններ եւ գայլիկական գիտելիքներ:

Երկրորդ օրը, բանակողները այցելեցին Եագուպիէի դրացի գիւղ՝ Ժրտէյտէի վանքը, ուր դաստիարակչական յայտագիր մը կատարելէ ետք, ազգային երգերով ու խանդավառ կանչերով գրաւեցին բոլորին ուշադրութիւնը:

Երկուրդ օրը, կարճ տողանցքէ ու արշաւէ մը ետք, Եագուպիէի բանակավայրին մէջ, լուսնի լոյսով եւ բրգաձեւ կրակարանի մը շուրջ տեղի ունեցաւ խարուկահանդէս, ուր գայլիկները, արծուիկներն ու Եագուպիէի փոքրիկները «Հայկ նահապետի թոռներ...» կանչելով եւ ազգային երգեր երգելով յուզեցին ներկաները:

Բանակումին երրորդ օրը, բոլորը այցելեցին հրաշալի Ս. Աննա եկեղեցին եւ մեծ զարմանքով ունկնդրեցին գիւղին եւ եկեղեցւոյ մասին Տէր Հօր ներկայացուցած պատմական ակնարկը:

Երրորդ օրուան աւարտին, գայլիկներն ու արծուիկները ցտեսութիւն երգելով, յուզուած, բայց բարի տրամադրութիւններով վերադարձան իրենց սուները:



«Գրիգոր Յակոբեան» գայլիկ-արծուիկ միաւորը:



# ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇՆԵՐՈՒ ՎԵՐԱՌՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ՝ ՂՆԷՄՅԷԻ ՄԷՉ

## Գեորգ Յակոբճեան ՀԱԼԷՊ

**Մ**արդու ուղեղը կը նմանի ջրամբարի, ամբարած գիտելիքները՝ ջուրի, իսկ գիտելիքները փոխանցումը՝ ծորակի: Այնքան ատեն որ կ'ապրինք, ուրեմն մեր ամբարած գիտելիքները ուրիշին փոխանցելու, ուրիշին հետ կիսելու ազնիւ տրամադրութիւնը ունինք կամ ունենանք: Եթէ այսպէս է մեր մօտեցումը, այս պարագային մեր ամբարած գիտելիքները պիտի պակսին ու վերջանան, եթէ նորը ամբարելու, նորը սորվելու եւ վերանորոգուելու աշխատանք չտանինք:

Այս տրամադրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի «Գրիգոր Յակոբճեան» արի-արենուշական միաւորի խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը, որոնք կոչուած են պատանեկան տարիքի նոր սերունդը դաստիարակելու, վերաորակաւորման դպրոց-բանակում մը ունեցան Ղնէմյի Ս. Գէորգ վանքին մէջ:

21-22 Հոկտեմբեր 2006ին, բանակողները Հայէպէն շոգեկառքով մեկնեցան Ղնէմյէ: Երթեւեկի այս միջոցը հաճելի էր բոլորին:

25 քոյր-եղբայրներ, քաղաքի ժխուէն հեռու, գիւղի գեղատեսիլ բնութեան գիրկը, առիթը ունեցան իրենց միութենական կեանքին եւ աւօրեային հետ առնչուած դասախօսութիւններ լսելու եւ գրոյցներ կատարելու:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի խմբապետութեան եւ հիւր դասախօսներու կողմէ ներկայացուցան հետեւեալ նիւթերը.- «Արխիւանային աշխատանք», «Մրագիր, յայտագիր եւ տեղեկագիր պատրաստելու ձեւեր», «Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը եւ գաղափարաբանութիւնը», «Հայ եկեղեցւոյ կառոյցը եւ աղանդաւորական շարժումները», «Գարեգիկ



Նժդեհի գաղափարաբանութիւնը», «Արբունքի շրջանի յատկանիշները եւ դժուարութիւնները», «Համաշխարհայնացում» եւ «Ո՛վ է յաջող դեկավարը»: Դասախօսութիւններուն մատչելի ձեւով ներկայացումը մեծապէս նպաստեց նիւթերու ընկալման եւ վերլուծման: Իւրաքանչիւր դասախօսութենէ ետք, տուեալ նիւթին շուրջ կատարուած խմբակային աշխատանքը իր նպատակին լաւապէս ծառայեց, որով բոլորն ալ իրենց գործօն մասնակցութիւնը բերին եւ հարուստ քննարկումներ կատարեցին արծարծուած նիւթերու շուրջ: Տեղին է նշել, թէ մասնակցողներու փոքրաթիւ ըլլալը, խմբակային աշխատանքներու մէջ, շատ կարեւոր դեր ունեցաւ:

Բանակումին գրոյցները կը շօշափէին այժմէական հարցեր.- «Միութենական գիտակցութիւն եւ գոհողութիւն», «Ո՛ւր է հայ երիտասարդը այսօր» եւ «Ընկերասիրութիւն»: Զրոյցները եւս ընթացան ջերմ ու հոգեհարազատ մթնոլորտի մէջ: Զրուցողներու միջեւ կարծիքներու եւ դիրքորոշումներու հակասութիւնները շուտով փարատեցան, հասնելու համար համոզիչ եզրակացութիւններու: Յստակ էր, թէ զիրար լսելու, իրարու հետ գրուցելու եւ կարծիքներ փոխանակելու ծարաւ ունէին բոլորը:

Յայտագրի դադարներուն արծարծուած հարցերն ու ընկերային մթնոլորտը, իրենց կարգին, յատուկ համ ու հոտ տուին դպրոց-բանակումին: Երեկոյեան, խարոյկին շուրջ հաւաքուած քոյրերն ու եղբայրները յեղափոխական, ազգային եւ ժողովրդական երգերով ու սկանդալական կանչերով ջերմ մթնոլորտ մը ստեղծեցին ու գիւղացիներուն պարգեւեցին անմոռանալի երեկոյ մը:

Բանակումի աւարտին, մասնակցող քոյր-եղբայրները նմանօրինակ նախաձեռնութիւններու շարունակման առաջարկ ներկայացուցին եւ տուն վերադարձան՝ վերանորոգուած տրամադրութեամբ, աշխատանքի նոր թափով եւ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեամբ լիցքաւորուած:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՁԱՆԸ



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութիւնը եւ Սկաուտ. Խորհուրդը:

## Թղթակից ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղը անդամական իր ընդհանուր ժողովը գումարեց Կիրակի, 21 Յուլիս 2006ի երեկոյեան ժամը 8ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գէորգ Կարապետեանի, Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներու եւ պատկան մարմնի ներկայացուցիչին:

Ժողովին օրակարգի աւարտին տեղի ունեցաւ ընտրութիւն:

Նախ՝ ընտրուեցան պետական վարչութեան անդամները.- եղբայրներ Աբրահամ Եագուպեան, Նուպար Թիւթիւնճեան, Վիգէն Գէորգեան, Յարութ Չամիչեան, Երուանդ Գասպարեան, Սեպուհ Մուրատեան, Կարօ Մատեան, Մակար Մակարեան եւ քոյր Սօսի Նաքքաչեան:

Ապա, ընտրուեցան տեղական վարչութեան անդամները.- եղբայրներ Հայկազ Ասատուրեան, Յովիկ Թանաչեան, Անդրանիկ Սիւլիւք-

ճեան, Յարութ Խաչատուրեան, Զարեհ Փամպուլեան, քոյրեր Ալին Գիւրիւմբեան եւ Մարիա Գափուճեան:

Ժողովը անցաւ եղբայրական առողջ մթնոլորտի մէջ: Ներկայացուեցան կարգ մը առաջարկներ՝ նորընտիր վարչութեան:

Ժողովին ցրուածին ետք տեղի ունեցաւ նորընտիր վարչութեան անդամներու աշխատանքներու բաժանում:

Այնուհետեւ, յաջորդական ժողովներով կազմուեցան զոյգ վարչութիւններու յանձնախումբերը, բացի Սկաուտ. Խորհուրդի կազմէն, նկատի ունենալով սկաուտական բանակումներուն ընթացքի մէջ ըլլալը եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումին շրջանի մասնակցութիւնը:

Բանակումներու աւարտին, նոր Սկաուտ. Խորհուրդի կազմութիւնը չուշացաւ:

Նշանակուեցաւ իննանդամ նոր կազմ, որ իր պարտականութիւնները ստանձնեց 26 Սեպտեմբեր 2006ին: Նոր Սկաուտ. Խորհուրդին մաս կազմեցին եղբայրներ Պօղոս Պալէոգեան, Խաժակ Տիւպէրեան, Յարութ Ղազարեան, Ալեքսան Պալեան, Յովիկ Համպեան, Աւետիս Տէրվիչեան (մասնաճիւղի խմբապետ), քոյրեր Մարինա Յովհաննէսեան, Հերմին Օհանեան եւ Նազիկ Էմիլեան:







ամենօրեայ ներկայութեամբ ակումբին մէջ պահակութիւն կատարելով եւ ակումբի նորոգութեան աշխատանքներուն մասնակցելով:

Դրօշակի արարողութենէն ետք տեղի ունեցաւ գեղարւեստական տպաւորիչ յայտագիր՝ ներշնչուած Լիբանանի վերջին պատերազմին առօրեայէն: Սկառտներու կողմէ շինուած «գինուորական օդանաւ» մը ակումբի տանիքէն յառաջացաւ դէպի կամուրջ, թափեց թղթիկներ՝ իբրեւ նախագգուշութիւն, ինչպէս կը կատարէր իսրայէլեան օդուժը, ապա հրթիռներ «արձակելով» (յատեսողական ձեւերով) քանդեց կամուրջը: «Միշտ օգնող» նշանաբանին հետեւելով, երէցները վերաշինեցին կամուրջը՝ գետեղելով նոր բաժին մը, որպէսզի մոկլիները, որոնք կը ներկայացնեն նոր սերունդը, կարենան տողանցել վրայէն:

Յայտագիրը փակուեցաւ սահիկներու ցուցադրութեամբ, ուր ներկայացուեցան անցեալ տարեշրջանի փակման հանդիսութիւններէն եւ ամառնային աշխատանքներէն նկարներ:

**ԺՐՏԷՅՏԷԻ ՄԱՍՆԱԳԻՂ**

Ժրտէյտէի մասնաճիւղը իր վերամուտը կատարեց Կիրակի, 19 Նոյեմբերի յետմիջօրէին, նախկին Էհրամճեան վարժարանի բակին մէջ: Հանդիսութեան ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան անդամ քոյր Լուսին Գազէզեան, Շրջանային խմբապետութեան եւ Սկառտական խորհուրդի անդամներ, մասնաճիւղի վարչութիւնը, Սկառտական խորհուրդը եւ խմբապետական կազմը, Հ.Յ.Դ. «Թեհլիրեան» կոմիտէութեան անդամներ, ծնողներ եւ հոծ բազմութիւն մը:

Յայտագիրը սկսաւ տողանցքով, որուն մասնակցեցան մասնաճիւղին սկառտական կազմը, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին: Տողանցքին յաջորդեց դրօշակի արարողութիւն: Այնուհետեւ տեղի ունեցաւ աստիճանատուջութիւն: Յակօր Հաննէեան ստացաւ փաղանգապետի, իսկ Սազօ Գրիգորեան եւ Զեփիւռ Գալայճեան՝ աքելլայի աստիճաններ:



Շրջանային Սկառտական խորհուրդին խօսքը փոխանցեց քոյր Արաքս Գուլաճեան: Ան նշեց, որ այս արարողութիւնը եւ աստիճանատուջութիւնը տեղի կ'ունենայ ամէն տարի, սակայն ամէն անգամուն ալ ան ունի իր յատկութիւնը եւ թելադրութիւնը: Թելադրութիւն պատասխանատուութեան գիտակցութեան՝ կարենալ լաւագոյն ձեւով կատարելու համար աշխատանքները, խոստման յանձնառութիւն՝ օգնելու համար կարիքաւորին, միասնական աշխատանքի՝ քայլերու անխոնջ ու անվարան, միշտ դէպի առաջ:



Խօսքը ուղղելով աստիճաններուն, քոյրը հրաւիրեց զանոնք աւելի եւս զարգացնելու իրենց գոհաբերութեան եւ համեստութեան ոգին: Եզրափակելով իր խօսքը, քոյր Արաքս բարի վերամուտ մաղթեց, յուսալով խաղաղ տարեշրջան մը բոլորելի:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ մասնաճիւղին 2005-2006 տարեշրջանի գործունէութիւնը ներկայացնող տեսաերկ մը: Հանդիսութեան վերջին բաժինով տեղի ունեցաւ խարուկահանդէս: Ներկայացուեցան հայկական եւ եւրոպական պարեր, ինչպէս նաեւ՝ թատերական կարճ ներկայացումներ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱԼԱՆՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԶԳԱԼԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

## Թղթակից ՎԱԼԱՆՍ

**Հ**ՄԸՄ-ի վալանսի մասնաճիւղի նոր վարչութիւնը արդէն իսկ ունի քանի մը ամսուան կեանք: Եօթնամյա վարչութիւնը աշխոյժ թափով մը թուած է իր աշխատանքներուն եւ առաջին հերթին իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է մասնաճիւղին մարզական խումբերուն վրայ:

Անցնող տարեշրջանին, մասնաճիւղին ֆուլթայլի Բ. խումբը դասակարգ մը նահանջեց եւ այժմ կը մասնակցի շրջանի առաջին դասակարգի ախոյեանութեան եւ ութ մրցումներէ ետք կը գրաւէ երրորդ դիրքը: Նահանգի բաժակի մրցումներուն, խումբը ցարդ յաղթած է իրմէ քանի մը դասակարգ բարձր խումբերու եւ հասած է քառորդ աւարտականի հանգրուան:



Քանի մը տարուան դժուարութենէ ետք, մասնաճիւղին ֆուլթայլի Բ. խումբը եւս լաւ ձեւով սկսած է նոր տարեշրջանը եւ ախոյեանութեան եօթը մրցումներէ ետք կը գրաւէ իր դասակարգի երրորդ դիրքը:

Մարզականի կողքին, վարչութիւնը նախանձախնդիր է նաեւ մասնաճիւղի ընկերային միջնորդարանի վերաշխուժացման: Այս իմաստով, 21 Հոկտեմբերին, վարչութիւնը կազմակերպեց պարահանդէս մը, որուն ներկայ գտնուեցան աւելի քան 500 հայորդիներ: Պարահանդէսը ձոխացուց Փօլ Պաղտատեան:

Շուտով, վարչութիւնը կը կազմակերպէ տարեկան իր վիճակահաղը, որ այնքան կը սպասուի տեղացիներու կողմէ: Վիճակահաղը առիթ մըն է, որ անոնք հաւաքուին ՀՄԸՄ-ի մասնաճիւղին եւ շրջանի հայութեան շուրջ:



Մասնաճիւղին ֆուլթայլի երկրորդ խումբը իր պատասխանատուներով:

Ոտքի, ձախէն աջ՝ վարչական եղբայրներ Յակոբ Քիրազեան, Վահէ Կօշկարեան, մարզիկներ Պօղոս Տոյթեան, Ծորն Ղազարեան, Ծարլի Ծէպուրեան, Կարօ Ստեփանեան, Ժաքի Գասպարեան, Քրիսթօֆ Տէրտէրեան եւ մասնաճիւղի ատենադպիր եղբ. Քլոս Ազարեան:

Նստած, ձախէն աջ՝ եղբայրներ Ֆրանք Ծէպուրեան (խմբապետ), Նոէլ Տէրտէրեան, Մարք Միսեան, Ստեփան Լըմուան եւ Լեոն Տէրվիշեան:



Մասնաճիւղին ֆուլթայլի առաջին խումբը իր պատասխանատուներով:

Ոտքի, ձախէն աջ՝ վարչական եղբայրներ Յովհաննէս Միքօ, Պօղոս Տէրտէրեան (ատենապետ), մարզիկներ Անթոնի Սաֆարեան, Բաֆֆի Կօշկարեան, Ալէն Մնացիկեան, Քրիսթօֆ Տէրտէրեան, Ծորնիկ Գասպարեան, Թոմա Ծէպուրեան (խմբապետ), մարզիչ Միշէլ Քէլակոբեան, մարզական պատասխանատու Դաիթ Համալեան:

Նստած, ձախէն աջ՝ եղբայրներ Սարգիս Եթերեան, Ռուբէն Քիրազեան, Յարութիւն Տէրտէրեան, Յակոբ Տէրտէրեան, Մայք Քերտո, Փաթրիք Տէրտէրեան եւ Տանի Պոյաճեան:



## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՈՐ ԿԱԶՄԵՐ

**Ա**նցնող ամիսներուն, Ներկայացուցչական իրենց ժողովները գումարեցին եւ պատասխանատու նոր կազմեր ընտրեցին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Փարիզի եւ Վալանսի շրջանները:

Նորընտիր կազմերը, պարտականութիւններու բաժանումէն ետք, պարզեցին հետեւեալ պատկերը:-

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Եղբ. Սթիւ Արթինեան - ատենապետ

Եղբ. Յովիկ Պետեւեան - փոխ ատենապետ / Նաւասարդեան

Քոյր Մարո Քէշիշեան - ատենադպիր

Եղբ. Օշին Յարութիւնեան - գանձապահ / Date Base

Քոյր Սայրի Ճէճէեան - հաշուապահ / մամուլ

Եղբ. Զարեհ Մովսիսեան - սկստակաւոր ներկայացուցիչ

Եղբ. Պերճ Պետոյեան - սկստակաւոր փոխ ներկայացուցիչ

Եղբ. Ժանո Քահվէճեան - մարզական ներկայացուցիչ

Եղբ. Խաչիկ Խալաթեան - Նաւասարդեան / մարզական փոխ ներկայացուցիչ

Քոյր Անո Մանսուրեան - տնտեսական

Եղբ. Րաֆֆի Խաչատուրեան - խորհրդական

### Հ.Մ.Ը.Մ.-ՅՐԱՆՍԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Եղբ. Հրաչ Սիսեուեան - ատենապետ

Եղբ. Վարանդ Պաղտասարեան - փոխ ատենապետ

Քոյր Ռիթա Իսահակեան - ատենադպիր

Եղբ. Յարութ Պազգայեան - գանձապահ

Եղբ. Նազո Նաճարեան - հաշուապահ

Եղբայրներ Կապի Պոսնոյեան, Ժոզէֆ Պետիկեան, Մորիս Տէմիրճեան, Հարմիկ Օհանեան, Արմէն Մնացականեան եւ Նարեկ Արթինեան – խորհրդականներ

### Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱԼԱՆՍԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Եղբ. Պողոս Տէրտէրեան - ատենապետ

Եղբ. Վահէ Կոչկարեան - փոխ ատենապետ

Եղբ. Քլոտ Ագատեան - ատենադպիր

Եղբ. Յակոբ Քիրազեան - գանձապահ

Եղբայրներ Դաւիթ Համալեան եւ Շանթ Ղազարեան - մարզական պատասխանատուներ

Եղբ. Յովհաննէս Միքո - գոյքապահ



*Philippe Photo Trade*

## Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

**EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION**

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.  
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria  
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

*Philippe Photo Trade*

**Assadourian Bros.**

ՀԵՔԻԱԹ

# ԻՄԱՍՏՈՒՆ ՁՈՒԼՅԱԿԸ

Պատրաստեց՝ Սալբի Լատոյեան  
ՊԷՅՐՈՒԹ

**Ժ**ամանակին, կար ու չկար, թագաւոր մը կար: Օր մը, թագաւորին քով հեռու երկրէ սուրհանդակ մը կու գայ: Կու գայ կլոր գիծ մը կը քաշէ թագաւորին գահին չորս կողմը ու սուսիկ-փուսիկ կը նստի, կը սպասէ:

Թագաւորը սուրհանդակին ըրածէն բան չի հասկնար. կը կանչէ իր իշխաններն ու գիտունները, հարց ու փորձ կ'ընէ, բայց անոնք ալ բան չեն հասկնար:

Թագաւորին համար մեծ ամօթ էր, որ իր երկրին մէջ չգտնուէր մէկը, որ բացատրէր եղածը: Ան կը բարկանայ եւ իշխաններուն հրաման կու տայ. «Եթէ պատասխան տըւող չբերէք, բոլորդ ալ սուրէ կ'անցնեն»:

Թագաւորին մարդիկը ահ ու դողով տունէ տուն կ'իյնան, որպէսզի իմաստուն մարդ մը գտնեն:

Տուն մը կը մտնեն, կը տեսնեն ներսը մարդ չկայ, բայց օրօրոցին մէջ անուշիկ փոքրիկ մը քնացած է. օրօրոցն ալ ինքն իրեն կ'օրօրուի: Շատ կը զարմանան:

Կը մտնեն քովի սենեակը, կը տեսնեն հոս ալ գրուած է օրօրոց մը, որ ինքն իրեն կ'օրօրուի ու նորէն մէկը չկայ: Վեր կ'ելլեն, տանիքը, կը տեսնեն գետինը լուացուած ցորեն փրուած, քովն ալ կայ

սնկուած խրտուիլակ մը, որ առանց հովի այս կողմ-այն կողմ կը շարժի ու թոյլ չի տար, որ թռչունները մօտեանն ցորենին:

Կ'ըսեն, կայ չկայ այստեղ բան մը կայ: Կ'իջնեն տան ներքնայատակը, կը տեսնեն ջուլհակ մը նստած է իր ջահրակին առջեւ, կտաւ կը գործէ: Թեւ մը կապուած է մաքոքին ծայրը, իսկ թեւ մըն ալ՝ սանտրին: Կտաւը գործելու ատեն թեւերը մաքոքին ու սանտրին հետ կ'երթան կու գան, օրօրոցներն ու ճիւղօտը իրենց հետ շարժելով:



Անունով ջուլհակ, գործով իմաստուն:

Թագաւորին մարդիկը կը մըտածեն որ այս ջուլհակը անպայման սուրհանդակին ըրածէն կրնայ հասկնալ ու կ'ըսեն.

Ջուլհակ աղբար, ելիր երթանք թագաւորին քով: Մէկը եկած է գահին շուրջը գիծ քաշած է ու լուր կը սպասէ: Մարդ ըրածէն բան չի հասկնար, եթէ դուն հասկնաս՝ թագաւորը քե-

զի մեծ նուէր մը կու տայ:

Ջուլհակը քիչ մը կը մտածէ, յետոյ երկու վէզ եւ վառեակ կ'առնէ հետը եւ ճամբայ կ'ելլէ:

Կը հասնին թագաւորին պալատը: Կը տեսնեն սուրհանդակը ինչպէս որ եկած է, նոյն ձեւով ալ սուս ու փուս նստած է: Ջուլհակը վէզերը կը հանէ ու կը նետէ սուրհանդակին առջեւ, սուրհանդակն ալ գրպանէն ափ մը կորեկ կը հանէ ու գետին կը թափէ: Ջուլհակը գետին կը դնէ վառեակը, որ մէկ վայրկեանի մէջ կը կտցէ ու կ'ուռտէ կորեկները: Սուրհանդակը այս որ կը տեսնէ, տրեխները կը հագնի ու լուռ կը հեռանայ պալատէն:

Թագաւորն ու մարդիկը ուրախացած կը հարցնեն ջուլհակին.

- Այս ի՞նչ հրաշք է ա՛յ ջուլհակ:

Ան կը բացատրէ.

- Այդ մարդը գահին շուրջ գիծ քաշած էր հասկնելու համար, թէ իրենց թագաւորը պիտի գայ մեր երկիրը,







## Ի՞նչ կը փոփոխի՞մ ըլլալ ԱՊԱԳԱՅԻՆ

պաշարէ եւ գրաւէ: Կուուելու միտք ունի՞ք թէ պիտի ենթարկուիք: Ես ալ վէզը նետեցի հասկցնելու համար, թէ դուք երեխայ էք մեր առջեւ: Դուք ո՛ւր, կուուիլը ուր: Գետին թափած կորեկներով ան հասկցուց, թէ անթիւ անհամար են իրենց զօրքերը: Ես ալ արձակեցի վառեակը, որ կերաւ կորեկը, եւ այսպէս իրեն հասկցուցի, թէ մեր մէկ զինուորը իրենց հագարը կը ջարդէ:

Թագաւորը մեծ պատիւներ կ'ընէ ջուլհակին, նուէրներ կու տայ եւ կ'ուզէ իշխան դարձնել, բայց ջուլհակը կը մերժէ:

Ինծի համար ջուլհակ մնալը մեծ պատիւ է, - կ'ըսէ ան, - միակ խնդրանքս այն է, թագաւորը ապրած մնայ, որ ջուլհակին ու կօշկակարին ալ արժէքը գիտնաս եւ մտածես որ իշխաններէն աւելի խելացի մարդիկ ալ կան:



# ԿԵՆՂԱՆԱԲԱՆ

Կենդանաբանութիւնը շատ լայն գիտութիւն մըն է:

Կենդանաբան մը մասնագիտացած կ'ըլլայ որոշ տեսակի կենդանիներու, օրինակ՝ թռչուններու, միջատներու, ստնաւորներու ծանօթութեան մէջ:

Կենդանաբանը նախ կենդանիները կ'ուսումնասիրէ բնութեան մէջ, կը հետեւի անոնց զարգացումին եւ կը բաժնէ տեսակներու, ապա եթէ անոնք շատ փոքր են՝ կ'անցնի տարրալուծարան եւ մանրադիտակի միջոցով մօտէն կը սերտէ զանոնք:

Կենդանաբանութիւնը ուսանելու համար պէտք է սիրել բնութիւնը, ուսումնասիրութիւններ կատարելը, բնագիտութիւնը եւ անշուշտ՝ կենդանիներու աշխարհը:

## ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

# ՔՈՒԱԼԱ



Քոալան յատկապէս կ'ապրի Աւստրալիոյ մէջ:

Արու քոալաներուն հասակը կ'ըլլայ 78 սմ., իսկ կշիռը՝ 11.8 քկ.:

Էգ քոալաներուն հասակը կ'ըլլայ 72 սմ., իսկ կշիռը՝ 7.9 քկ.:

Քոալաները կ'ապրին 12 տարի: Անոնց գոյնը խառնուրդ է մոխրագոյնի եւ սրճագոյնի:

Քոալաները իրենց ժամանկը կ'անցընեն ուտելով: Անոնք կ'ուտեն մեծաքանակ տերեւ, անոր համար միշտ կ'ըլլան ծառերու վրայ:

Քոալաները տարբեր են արջերէն: Անոնք լաւ կը պաշտպանեն իրենք զիրենք եւ զիսեն լողալ:

Էգ քոալաները կրնան ծննդաբերել 3 կամ 4 տարեկանէն սկսեալ: Անոնք տարին մէկ պգտիկ կրնան բերել, իսկ իրենց ամբողջ կեանքին ընթացքին՝ 5-6 պգտիկ: Պգտիկ քոալաները կը կոչուին ճոյ: Անոնք կը ծնին 2 սմ. եւ կը կշռեն 1 քկ., անոր համար մինչեւ 1 տարեկան կը մնան իրենց մօր գրպանին մէջ, ինչպէս՝ քանկուրուները:



## ՀԱՆՇԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է: Թռչուն է՝ առանց բոյնի ու թափառական, Չունի ձեւ եւ գոյն սակայն:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր շունչ):





Էլի Հուլիշեան

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԷՄՊՐԻՃԻ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ...

Շարունակուած՝ 21րդ էջէն

օտար ափերուն մէջ մեր զաւակները օտարամոլութենէ հեռու պահելու համար, զանոնք պէտք է յանձնենք Հ.Մ.Ը.Մ.ի ինամբին:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, որ ըսաւ. «Այսօր ուրախութեան օր է, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, մեծ հրճուանքով կ'ողջունեմ այս մասնաճիւղը»: Եղ-

բայրը յայտնեց նաեւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը 88 տարիէ ի վեր իր բոլոր մասնաճիւղերով կը ձգտի պատրաստել Ֆիզիքապէս տոկուն եւ իմացականութեամբ բարձր հայեր:

Պարահանդէսը ճոխացուցին երգիչներ Յարութ Խաչոյեան եւ Խորէն Մուրատեան: Խանդավառ մթնոլորտը իր գագաթնակէտին հասցուց ներկայ երիտասարդութիւնը:

## «ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ» ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երկու տարիէ ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ: «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆ ԳՆԵՐԷՆ Ապտոնի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թադուհի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Զարեհ Գարակիւիլեան, Յակոբ Թոքաթլեան, Վալգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթո Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճէթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տէտէեան, Արթին Մաճաքեան, Արա Իմամճեան, Պետրոս Պաքրբճեան, Բաբգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան եւ Կարապետ Ն. Թովճեան:



ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Ճորճ Տաքէսեան:



### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Իտալիոյ Փոլիթպոլի արտոյեանութիւնը - Հասկըցի'ր:
2. Դատարան - Մովաբի քաղաքներէն:
3. Մսային լար - Փոքրացնող մասնիկ - Յովհաննէս Շիրազի երկերէն «... Հայաստանի»:
4. Աղբիւր - Իգական օտար անուն:
5. Դրկից տառեր - Հայաստանի 2006ի լաւագոյն մարզիկը:
6. Անձրեւել - Իրերայաջորդ գիրեր - Կրկնուած բաղաձայններ:
7. Քաղցր - Կիւրոս Բ.ի հիմնադրած պարսկական հարստութիւնը:
8. Բրտոն - Իշուկ - Դրամ:
9. Փորձանաչատ - Նախահօր կողակիցը:
10. Կլայել - Յուցական ածական - Կեանքի զրաւ:
11. Չար ոգի - Հայկական աղօթագիրք - Անձնական դերանուն:
12. Մանչուկ - Անձին այծ - Մնտուկին պարունակութենէն:
13. Գծագիտական գործիք - Թուական:
14. Ափրիկեան երկիր - Հռչակաւոր:
15. Լծորդութիւն - Ժխտական մասնիկ - Պտուղներու կորիզներուն գտնուած վայրը - Թէ որ:
16. Ձայնակից տառեր - Կանչէ՛ - Շիճուկ:
17. Ստացական դերանուն - Մորթային բիծ - Մննդամթերք:
18. Փափուկ - Գրեանական պիտոյքներէն - Ժամանակի միաւոր:
19. Հնճուած ցորենի խուրճ - Արամբի - Վախցո՛ւր:
20. Խոնաւ - Միւս - Նախաճաշիկ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Դրամաշորթ - Ոլորք, գլանի գալար:
2. Կնգուղ, եկեղեցականի սրածայր ու կլոր գլխարկ - Ողորկել - Շարլոթ Քորտէյի գոհը:
3. Եղնախաղի լեռնագագաթներէն - Վիթխարի:
4. Ընտիր - Անձնական դերանուն - Դանդաղաշարժ կենդանի - Հոլովակերտ մասնիկ:
5. Ձեռնհաս ըլլալ - Առատ հաւկիթ հայթայթող (հաւ) - Առնչութիւն - Իրերայաջորդ գիրեր:
6. Հանքային կրկնակ աղ - Կառավարական կազմ - Նշաւակէ՛:
7. Այբուբենէն - Գիտնալ կամ հպարտանալ - Աստուածային - Փոքրացնող մասնիկ:
8. Տառի մը անունը - Պտղատու ծառատեսակներ - Տապանաբնակ նահապետը - Սպասէ՛:
9. Փորթուգալեան նախկին գաղթավայր Հնդկաստանի մէջ - Արական անուն - Պրագիլի Փոլիթպոլի ազգային խումբին մարզիչը:
10. Իրարու անցած՝ հոլանի - Ջնջէ՛ - Ռուսերէն՝ այո՛:
11. Անորոշ դերանուն - Բազմութիւն - Լիբանանի լեռներէն:
12. Անձնական դերանուն - Էական բայ - Մէկուն դէմքին տրուած՝ բաց ափով հարուած:
13. Ռուս քննիսովումըն - Պոչատ՝ կռուակ:
14. Իգական օտար անուն - Մովային - Եւրոպական մայրաքաղաք:
15. Սայրենի փոքր - Կարասի - Ճիւղ - Կշիռքի շարժուն լեզուակ:

### ԹԻՒ 158 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	Մ	Ա	Ր	Ձ	Ե	Լ	Օ	Լ	Ի	Փ	Ի											
2	Ի	Տ	Ր	Ի	Ս	Մ	Ա	Ն	Ա	Մ	Ա											
3	Ր	Է	Ր	Ա	Մ	Կ	Տ	Ր	Ա	Ն												
4	Ո	Ն	Ց	Յ	Յ	Ց	Ր	Ե	Ս	Ա												
5	Ս	Ա	Մ	Ի	Կ	Մ	Լ	Տ	Ի	Ն	Ի											
6	Լ	Ա	Յ	Ն	Ե	Ղ	Ի	Տ	Ա	Ր	Մ											
7	Ա	Ր	Գ	Ս	Ա	Ո	Ր															
8	Ի	Փ	Կ	Ո	Կ	Ա	Ն															
9	Ք	Ի	Ա	Ք	Է	Ց	Է															
10	Լ	Ա	Ր	Ք	Տ	Լ	Ո	Ն														
11	Ո	Ր	Գ	Ի	Ք	Ն	Ս	Տ	Ա	Ր	Ա	Ն										
12	Ջ																					
13	Ը																					
14																						
15	Ա																					
16	Հ	Ա	Մ	Ա	Լ	Ի	Ր	Ի	Ր	Ա	Ն	Ն										
17	Ա	Կ	Ա	Ր	Լ	Ե	Մ	Ք	Ի	Ն	Ջ	Ե	Ր									
18	Բ																					
19	Ե	Ր	Ա	Ջ	Կ	Ո	Յ	Ս	Շ	Ի	Ն	Ի										
20	Կ	Ր	Կ	Ի	Ն	Ա	Ր	Ի	Կ	Ո	Ն	Ջ	Ե									



2006 - 2007 ՏԱՐԵՇՐԱԶԱՆ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՄԻՏԻ  
ՍԿԱՍՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ